Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր

Հիմնական տեքստ

ԱՄՆ ՄԶԳ՝ Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր
թիվ AAG-111-G-13-001

ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝

ՈՒՂՂՎԱԾ

«ԱՌԱՎԵԼ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ»

28 սեպտեմբերի, 2013թ.

Ֆինանսական տվյալներ՝ FY12/13 EC, FY12/13 DV
Գանձապետային նիշ՝ 7212/130306, 7212/131021
Նպատակ՝ A2, A6
Ծրագրային ոլորտ/բաղադրիչ՝ A08, A10, A141
Հատկացվող գումար՝ 2 448 881 ԱՄՆ դոլար
Համաձայնագիր թիվ՝ AAG-111-G-13-001

Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր

Բովանդակություն

Հոդված 1. Նպատակը 4
Հոդված 2. Գործնական նպատակը, ծրագրի ոլորտները և ծրագրի բաղադրիչները. 4
Բաժին 2.1. Գործնական նպատակը. 4
Բաժին 2.2. Ծրագրի ոլորտները և բաղադրիչները. 4
Բաժին 2.3. Հավելված 1. «Մանրամասն նկարագրություն». 4
Հոդված 3. Կողմերի ներդրումները 5
Բաժին 3.1. ԱՄՆ ՄԶԳ-ի ներդրումը 5
Բաժին 3.2. Դրամաշնորհառուի ներդրումը 6
Հոդված 4. Եզրափակման ամսաթիվ 7
Հոդված 5. Հատկացման նախապայմաններ. 7
Բաժին 5.1. Առաջին հատկացումը. 7
Բաժին 5.2. Աշխատանքների հետ կապված վճարման որոշակի նախապայմաններ 8
Բաժին 5.3. Այլ պարտավորություններ 9
Բաժին 5.4 Ծանուցում 10
Բաժին 5.5. Նախապայմանների վերջնաժամկետներ 10
Հոդված 6. Հատուկ դրույթներ 11
Հոդված 7. Այլ դրույթներ 12
Բաժին 7.1. Հաղորդակցություն 12
Բաժին 7.2. Ներկայացուցիչներ. 13
Բաժին 7.3. Հավելված Ա՝ «Ստանդարտ Դրույթներ» 13
Բաժին 7.4. Համաձայնագրի լեզուն 13
Բաժին 7.5. Ուժի մեջ մտնելը 14
Հավելված 1 16
Մանրամասն նկարագրիր 16
Հավելված 1 34
Առդիր Ա 34
ՍՏԱՆԴԱՐՏ ԴՐՈՒՅԹՆԵՐ 36
Հոդված Ա. Սահմանումներ և իրականացման մասին նամակներ 39
Բաժին Ա.1. Սահմանումներ 39
Բաժին Ա.2. Իրականացման մասին նամակներ 39
Հոդված Բ. Ընդհանուր պարտավորվածություններ 39
Բաժին Բ.1. Խորհրդատվություն 39
Բաժին Բ.2. Համաձայնագրի կատարում 39
Բաժին Բ.3. Ապրանքների և ծառայությունների օգտագործում 40
Բաժին Բ.4. Հարկում 40

Բաժին Բ.5. Հաշվետվություններ և տեղեկություններ, Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքեր և գրանցամատյաններ, աուդիտներ ու տեսչական ստուգումներ 42
Բաժին Բ.6. Տեղեկատվության ամբողջականություն 46
Բաժին Բ.7. Այլ վճարումներ 46
Բաժին Բ.8. Տեղեկատվություն և նշագրում 46
Հոդված Գ. Գնումների վերաբերյալ դրույթներ 47
Բաժին Գ.1. Աղբյուր և ծագում 47
Բաժին Գ.2. Համապատասխանելիության ամսաթիվ 48
Բաժին Գ.3. Պլաններ, մասնագրեր, պայմանագրեր 48
Բաժին Գ.4. Ողջամիտ գին 49
Բաժին Գ.5. Ծանուցում հնարավոր մատակարարներին 49
Բաժին Գ.6. Փոխադրում 50
Բաժին Գ.7. Ապահովագրություն 50
Բաժին Գ.8. ԱՄՆ կառավարությանը պատկանող հավելյալ գույք 51
Հոդված Դ. Հատկացումներ 52
Բաժին Դ.1. Հատկացման ձևեր 52
Բաժին Դ.2. Փոխարժեք 52
Հոդված Ե. Դադարեցում. իրավական միջոցներ 52
Բաժին Ե.1. Կասեցում և դադարեցում 52
Բաժին Ե.2.Միջոցների վերադարձ 53
Բաժին Ե.3. Իրավական միջոցներից հրաժարման բացառում 54
Բաժին Ե.4. Իրավունքի փոխանցում 54
Հոդված Զ. Այլ դրույթներ 55
Բաժին Զ.1. Ներդրումների խթանում 55
Բաժին Զ.2. Արգելք թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված անձանց աջակցելու վերաբերյալ 55
Բաժին Զ.3. Աշխատողների իրավունքներ 56
Բաժին Զ.4. Ահաբեկչության ֆինանսավորում 56
Բաժին Զ.5. Արգելք միջազգային համաժողովներում օտարերկրյա կառավարությունների պատվիրակությունների ֆինանսավորման վերաբերյալ 57

ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ամսաթիվ՝ 28 սեպտեմբերի, 2013թ.

Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ ի դեմս Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության (ԱՄՆ ՄԶԳ)

և

Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Կառավարության աշխատակազմի (այսուհետ՝ Դրամաշնորհառու) միջև:

Հոդված 1. Նպատակը

Զարգացմանն ուղղված համագործակցության սույն Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նպատակը ստորև ներկայացվող Նպատակի իրագործմանն ուղղված համագործակցության շուրջ վերը նշված կողմերի (այսուհետ՝ Կողմեր) փոխհամաձայնության սահմանումն է:

Հոդված 2. Գործնական նպատակը, ծրագրի ոլորտները և ծրագրի բաղադրիչները.

Բաժին 2.1. Գործնական նպատակը.

Սույն համաձայնագրի նպատակը *«Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարումն»* է (գործնական նպատակ), ինչպես ներկայացված է «Մանրամասն նկարագիր» վերնագրով Ա առդիրում:

Բաժին 2.2. Ծրագրի ոլորտները և բաղադրիչները.

Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից տրամադրվող օտարերկրյա օժանդակության Նպատակի իրագործման համար սույն Համաձայնագրի Կողմերը համաձայնում են համատեղ աշխատանքներ իրականացնել Միջանկյալ արդյունքների ապահովման ուղղությամբ, որոնք ներկայացված են «Մանրամասն նկարագրություն» վերնագրով Ա հավելվածում: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական միջոցները նախատեսվելու են ըստ Ծրագրի ոլորտների և բաղադրիչների, ինչպես ներկայացված է Ա հավելվածի՝ «Ֆինանսական պլան» վերնագրով 1–ին առդիրում:

Բաժին 2.3. Հավելված 1. «Մանրամասն նկարագրություն».

Կից ներկայացվող 1–ին հավելվածում մանրամասն ներկայացվում է վերը նշված Նպատակը և նկարագրվում Նպատակի իրագործմանը հասնելու համար ԱՄՆ

ՄԶԳ-ի կողմից ապահովման ենթակա միջանկյալ արդյունքները, ինչպես նաև այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են Նպատակի և Միջանկյալ արդյունքներից յուրաքանչյուրի գծով աշխատանքների ընթացքի և վերջնական իրականացման գնահատման համար: 2.1 բաժնում ներկայացված «Գործնական նպատակի» սահմաններում 1–ին հավելվածը կարող է փոփոխվել Կողմերի լիազորված ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ՝ առանց սույն Համաձայնագրի պաշտոնական փոփոխության, առանց հակասելու Կողմերի օրենքներով սահմանված ներքին ընթացակարգերին:

Հոդված 3. Կողմերի ներդրումները

Բաժին 3.1. ԱՄՆ ՄԶԳ-ի ներդրումը

ա) Դրամաշնորհը.

Սույն համաձայնագրով սահմանված Նպատակի իրագործմանն օժանդակելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն՝ 1961թ. Օտարերկրյա օժանդակության մասին որոշման համաձայն, սույնով Դրամաշնորհառուին է հատկացնում [երկու միլիոն չորս հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութսունմեկ] ԱՄՆ դոլարը (2 448 881 ԱՄՆ դոլար) չգերազանցող գումար (այսուհետ՝ դրամաշնորհ), Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

բ) ԱՄՆ ՄԶԳ-ի նախատեսվող հանրագումարային ներդրումը.

Նպատակի իրագործումն ապահովելու համար ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից նախատեսվող հանրագումարային ներդրումը կկազմի երեսուներեք միլիոն ԱՄՆ դոլար (33 000 000 ԱՄՆ դոլար), որը կտրամադրվի աճողական կարգով հաշվարկվող մասնաբաժիններով: Հետագա աճողական մասնաբաժինները պայմանավորված կլինեն ԱՄՆ ՄԶԳ-ի՝ Նպատակի համար նախատեսվող գումարների առկայությունից, և ԱՄՆ ՄԶԳ կողմից կհատկացվեն Դրամաշնորհառուին տրվող գրավոր ծանուցմամբ: Կողմերը համաձայնում են, որ տրամադրվող յուրաքանչյուր նման աճողական ներդրմամբ, եթե այդպիսին կա, համահավաք կարգով ավելացվում է դրամաշնորհի՝ 3.1 բաժնում սահմանված ընդհանուր գումարը, և, հետևաբար, կարող է ավելացվել 3.2 բաժնում սահմանված՝ Դրամաշնորհառուի ներդրման չափը: Դրամաշնորհառուն համաձայնում է ԱՄՆ ՄԶԳ-ին տրվող գրավոր ծանուցմամբ հաստատել յուրաքանչյուր նման աճողական ներդրման ստացումը, եթե այդպիսիք լինեն:

գ) Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն որոշում է, որ 3.1(ա) բաժնում սահմանված իր ներդրումը գերազանցում է այն գումարը, որը Նպատակի իրագործման համար կարող է ողջամտորեն հատկացվել ԱՄՆ–ի ընթացիկ կամ հաջորդ ֆինանսական տարում, ապա ԱՄՆ ՄԶԳ-ն՝ Դրամաշնորհառուին տրվող գրավոր ծանուցմամբ կարող է հետ վերցնել գերազանցող գումարը՝ այդպիսով նվազեցնելով 3.1(ա) բաժնում սահմանված Դրամաշնորհի գումարը: Սույն ենթաբաժնի համաձայն իրականացվող գործողությունները չեն նվազեցնում ԱՄՆ ՄԶԳ-ի՝ 3.1(բ) բաժնում նշված նախատեսվող հանրագումարային ներդրումը:

Բաժին 3.2. Դրամաշնորհառուի ներդրումը

(ա) Դրամաշնորհառուն համաձայնում է տրամադրել ֆինանսական միջոցները կամ կարգադրել դրանց տրամադրումը՝ ի հավելումն ԱՄՆ ՄԶԳ-ի և 1–ին հավելվածում նշված՝ ցանկացած այլ դոնոր կազմակերպության կողմից տրամադրվող միջոցների, ինչպես նաև բոլոր այլ ռեսուրսների, որոնք պահանջվում են Նպատակի իրագործումն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները եզրափակման ամսաթվին կամ դրանից շուտ ավարտելու համար:

(բ) ԱՄՆ ՄԶԳ-ի՝ 3.1(ա) բաժնում նախատեսված ներդրման վրա հիմնված Դրամաշնորհառուի ներդրումը չի կարող պակաս լինել ութ հարյուր տասնվեց հազար երկու հարյուր իննսունչորս (816 294) ԱՄՆ դոլարին համարժեք գումարից՝ բաղկացած լինելով ընթացիկ բյուջեի միջոցներից տրամադրվող բնաիրային կամ դրամական ներդրումներից: Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն աճողական կարգով փոփոխում է 3.1(ա) բաժնում սահմանված դրամաշնորհի գումարը, ապա Դրամաշնորհառուի ներդրումը յուրաքանչյուր աճողական մասնաբաժնի հետ համապատասխանաբար ավելանում է այնպես, որ Դրամաշնորհառուի ներդրումը պակաս չլինի դրամաշնորհի գումարի այն մասի մեկ երրորդից, որն օգտագործվում է այն աշխատանքների աջակցման համար, որոնցով կամ ուղղակիորեն զգալի օգուտ է ապահովվում ՀՀ Կառավարությանը կամ նախատեսվում ՀՀ Կառավարության ուղղակի կամ էական ներգրավվածությունն այդ օժանդակության վարչարարության, վերահսկողության կամ կառավարման հարցում: Դրամաշնորհառուի ներդրման ճշգրիտ գումարը պետք է նշվի աճողական յուրաքանչյուր ներդրման վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ-ի գրավոր ծանուցման մեջ: Այն դեպքում, երբ ԱՄՆ ՄԶԳ–ն նվազեցնում է 3.1(ա) հոդվածում նշված դրամաշնորհի գումարը 3.1(գ) հոդվածին համապատասխան, ապա Դրամաշնորհառուի ներդրումը համապատասխանաբար նվազեցվում է սույն փաստաթղթում ներկայացված հաշվարկի համաձայն, և այդ նվազեցումներն արձանագրվում են ԱՄՆ ՄԶԳ իրականացման մասին նամակներով: Նպատակի

իրագործումն ապահովելու համար Դրամաշնորհառուի նախատեսվող հանրագումարային ներդրումը կախված է Դրամաշնորհառուի համար այս նպատակի համար բյուջեով նախատեսված միջոցների առկայությունից և ԱՄՆ ՄԶԳ-ի համար՝ 3.1.(բ) բաժնում նշված ընդհանուր հաշվարկված գումարի հատկացման համար անհրաժեշտ միջոցների առկայությունից: Դրամաշնորհառուն պետք է առնվազն տարեկան կտրվածքով հաշվետվություն ներկայացնի իր դրամական և բնաիրային ներդրումների վերաբերյալ՝ ԱՄՆ ՄԶԳ–ի հետ համաձայնեցված ձևաչափով:

Հոդված 4. Եզրափակման ամսաթիվ

(ա) Եզրափակման ամսաթիվը, որը 2018 թվականի սեպտեմբերի 30-ն է կամ Կողմերի միջև գրավոր կարգով համաձայնեցված ցանկացած այլ ամսաթիվ, այն ամսաթիվն է, երբ՝ Կողմերի գնահատմամբ, նպատակի իրագործման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները պետք է ավարտված լինեն:

(բ) Բացառությամբ ԱՄՆ ՄԶԳ–ի հետ գրավոր համաձայնեցված այլ դեպքերի, ԱՄՆ ՄԶԳ-ն դուրս չի գրի կամ չի հաստատի եզրափակման ամսաթվից հետո մատուցված ծառայությունների կամ ձեռք բերված ապրանքների համար դրամաշնորհի միջոցներից վճարում հաստատող փաստաթղթեր:

(գ) Հատկացման հայտերը իրականացման մասին նամակներով սահմանվող բոլոր անհրաժեշտ կից փաստաթղթերի հետ միասին պետք է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ստացվեն ոչ ուշ, քան եզրափակման ամսաթվից ինը (9) ամիս հետո, կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից գրավոր կերպով համաձայնեցված՝ ավարտելու ամսաթվից առաջ կամ հետո այլ ժամկետում: Նշված ժամկետից հետո ԱՄՆ ՄԶԳ-ն ցանկացած ժամանակ կարող է դրամաշնորհառուին ուղղված գրավոր ծանուցմամբ լիովին կամ մասամբ նվազեցնել դրամաշնորհի գումարը, եթե դրա համար ներկայացվող հատկացման հայտերը՝ իրականացման մասին նամակներով սահմանվող բոլոր կից փաստաթղթերի հետ միասին, չեն ստացվել մինչև այդ ժամկետի ավարտը:

Հոդված 5. Հատկացման նախապայմաններ.

Բաժին 5.1. Առաջին հատկացումը.

Նախքան դրամաշնորհային ծրագրի շրջանակներում առաջին հատկացումը կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից համապատասխան փաստաթղթերի դուրսգրումը, որոնց հիման վրա կատարվելու է հատկացումը, դրամաշնորհառուն՝ բացառությամբ

կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ դեպքերի, ԱՄՆ ՄՋԳ–ի կողմից սահմանված ձևով և բովանդակությամբ վերջինս է ներկայացնում հետևյալը.

(ա) Արդարադատության նախարարության՝ ԱՄՆ ՄՋԳ համար ընդունելի եզրակացությունն այն մասին, որ (i) սույն Համաձայնագիրը պատշաճ կերպ լիազորվել կամ վավերացվել և կնքվել է դրամաշնորհառուի անունից, (ii) սույն Համաձայնագրով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանվում է դրամաշնորհառուի գործող և պարտադիր իրավական ուժ ունեցող պարտավորությունը, և (iii) սույն Համաձայնագիրը գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերն իրականացվել և հաստատումները ձեռք են բերվել դրամաշնորհառուի կողմից կամ նրա անունից.

(բ) ստորագրված տեղեկանք որպես Դրամաշնորհառու հանդես եկող կամ այդ իրավասությամբ գործող՝ 7.2 բաժնում նշված անձի անունից, որում նշված են բոլոր այն լրացուցիչ ներկայացուցիչների անունները և պաշտոնները, որոնցից յուրաքանչյուրը կարող է գործել 7.2 բաժնի համաձայն. և

(գ) ստորագրված տեղեկանք որպես Դրամաշնորհառու հանդես եկող կամ այդ իրավասությամբ գործող՝ 7.2 բաժնում նշված անձի անունից, որով հավաստվում է, որ դրամաշնորհառուն կկատարի իր ստանձնած բոլոր պարտավորությունները, որոնք սահմանված են 1–ին հավելվածի՝ «Կողմերի պարտավորությունները» վերնագրով VI.2. հոդվածում:

Բաժին 5.2. Աշխատանքների հետ կապված վճարման որոշակի նախապայմաններ

(ա) ԱՄՆ ՄՋԳ-ն՝ ըստ անհրաժեշտության և հետագայում համաձայնեցված կարգով, Դրամաշնորհառուին կտրամադրի տեխնիկական և նյութական օժանդակություն՝ տեղական ինքնակառավարման կարողությունների հզորացմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության ձևավորման նպատակով նախաձեռնված գործընթացին աջակցելու համար: Նախքան Տարածքային կառավարման նախարարությանը օժանդակություն տրամադրելու նպատակով ԱՄՆ ՄՋԳ –ի կողմից կատարվող հատկացումը, 2013թ. սեպտեմբերի 30-ից հետո, Դրամաշնորհառուն պետք է պաշտոնապես ընդունի ապակենտրոնացման և խոշորացման մոդելը և նախաձեռնի երկամյա պիլոտային ծրագիր: Հետագա հատկացումները պիլոտային փուլից հետո պայմանավորված կլինեն համազգային բարեփոխումներ իրականացնելու պաշտոնական որոշմամբ:

(բ) Դրամաշնորհառուն կմշակի միջոցառումների ծրագիր-ժամանակացույց, ինչպես նկարագրված է 1–ին հավելվածում, ուղղված տեղական ինքնակառավարման կարողությունների հզորացմանը: Դրամաշնորհառուին հատկացվող հետագա միջոցների տրամադրումը պայմանավորվում է օրենսդրական փաթեթում ներառված տարբեր օրենքների՝ 1–ին առդիրում մանրամասն սահմանված ժամանակացույցին համապատասխան ներկայացմամբ և ընդունմամբ:

(գ) Նախքան ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսական միջոցների հատկացումը կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից փաստաթղթերի դուրսգրումը, որոնց համաձայն միջոցների հատկացում է իրականացվելու Էթիկայի հանձնաժողովին տեխնիկական կամ նյութական օժանդակություն տրամադրելու նպատակով, դրամաշնորհառուն Էթիկայի հանձնաժողովին ապահովում է առանձին շենքային պայմաններով և պետբյուջեում նախատեսվող ընթացիկ բյուջետային առանձին միջոցներով:

(դ) Նախքան ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսական միջոցների հատկացումը կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից փաստաթղթերի դուրսգրումը, որոնց համաձայն միջոցների հատկացում է իրականացվելու Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովին տեխնիկական կամ նյութական օժանդակություն տրամադրելու նպատակով, դրամաշնորհառուն Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովին ապահովում է բյուջետային համապատասխան առանձին միջոցներով:

Բաժին 5.3. Այլ պարտավորություններ

(ա) Դրամաշնորհառուն պարտավորվում է բարեփոխումներ իրականացնել՝ ուղղված հանրային ծառայությունների թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության բարձրացմանը:

(բ) Կոռուպցիայի դեմ ավելի արդյունավետ պայքարելու նպատակով դրամաշնորհառուն պարտավորվում է շահագրգիռ կողմերի ներգրավմամբ հրապարակային քննարկումներ անցկացնել չարաշահումների դեպքերի մասին իրազեկողների պաշտպանության մասին օրենքի ընդունման վերաբերյալ և հրապարակել օրենքի նախագիծը:

(գ) Դրամաշնորհառուն պարտավորվում է կազմակերպել ազատ, արդար և թափանցիկ տեղական և համապետական ընտրություններ՝ նվազագույնի հասցնելու համար վարչական և պետական ռեսուրսների օգտագործումը ընտրարշավների և մրցակցային այլ գործընթացների համար:

(դ) Դրամաշնորհառուն մինչև 2014 թվականի հունիսի 30–ը պետք է ներկայացնի Ազգային ժողովի կողմից ընդունման ենթակա օրենսդրական փաթեթ՝ ուղղված քաղաքացիական հասարակության համար բարենպաստ միջավայրի բարելավմանը, ինչպես մանրամասն ներկայացված է Ա հավելվածում:

(ե) Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված իր ջանքերի շրջանակներում Դրամաշնորհառուն պարտավորվում է ընդունել և լրամշակել ու կիրարկել օրենքներ և իրավական մեխանիզմներ պետական հատվածի բոլոր պաշտոնյաների և աշխատակիցների մասով մասնավոր և պետական շահերի բախումներն արգելելու, սահմանափակելու և դրանց համար սանկցիաներ նախատեսելու նպատակով՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության նախաձեռնած «Ստամբուլի գործողությունների ծրագրում» ներառված հանձնարարականներին, ինչպես նաև միջազգային լավագույն այլ գործելակերպերին, այդ թվում՝ ՄԱԿ–ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20–րդ հոդվածին համապատասխան:

(զ) Դրամաշնորհառուն պարտավորվում է ընդունել Ազգային ժողովի՝ որպես իշխանության անկախ ճյուղի դերն ու նշանակությունը, որտեղ քաղաքական ուժերն ու շահագրգիռ կողմերը հավասար հնարավորություններ ունեն բանավեճի և ներկայացվածության, խորհրդարանական ռեսուրսներից օգտվելու, հանրային լսումների, քաղաքացիների ներգրավվածության և շահերի առումով:

Բաժին 5.4 Ծանուցում

ԱՄՆ ՄԶԳ-ն դրամաշնորհառուին անհապաղ տեղեկացնում է նախապայմանը բավարարված համարելու վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ-ի որոշման մասին:

Բաժին 5.5. Նախապայմանների վերջնաժամկետներ

(ա) 5.1 բաժնում նշված նախապայմանների ապահովման վերջնաժամկետը սահմանվում է 90 օր՝ հաշվարկված սույն Համաձայնագրի ամսաթվից հետո, կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից վերը նշված վերջնաժամկետից առաջ կամ հետո գրավոր կերպով համաձայնեցված այլ՝ ավելի ուշ ժամկետ: Եթե 5.1բաժնում սահմանված պայմանները չեն բավարարվել մինչև վերոհիշյալ վերջնաժամկետը, ԱՄՆ ՄԶԳ-ն ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը դրամաշնորհառուին գրավոր ծանուցում ուղարկելով:

(բ) Եթե ԱՄՆ ՄԶԳ–ն նվազեցնում է 3.1(ա) մասում նշված դրամաշնորհի գումարը, Կողմերը կրկին բանակցություններ են վարում և փոփոխում 5.2 և 5.3 մասերում

նշված վերջնաժամկետները՝ ժամկետների վրա նման նվազեցման ազդեցությունն արտացոլելու նպատակով:

Հոդված 6. Հատուկ դրույթներ

(ա) Դրամաշնորհառուն, ՀՀ համապատասխան նախարարությունների և մարմինների հետ համատեղ, սույնով պարտավորվում և համաձայնում է անվճար և ժամանակին տրամադրել, նորացնել և (կամ) երկարաձգել սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող գործունեություն իրականացնող համապատասխան անձանց (ստորև ներկայացված) տրվող բոլոր պաշտոնական թույլտվությունները, վիզաները, արտոնությունները և այլ թույլատրումները (այդ թվում՝ բոլոր հաստատումները, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են անհրաժեշտ լինել տեղեկատվության լիարժեք հասանելիության, ինչպես նաև ծրագրի իրականացման վայրեր ու համապատասխան մարմիններ մուտքի հնարավորության համար) (այսուհետ հավաքականորեն՝ պահանջվող փաստաթղթեր): Սույն դրույթի իմաստով՝ համապատասխան անձինք են համարվում. (1) սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող գործունեություն իրականացնող կապալառուների, դրամաշնորհառու անձանց և այլ կազմակերպությունների աշխատողները և խորհրդատուները, և (2) նշված աշխատողների և խորհրդատուների ընտանիքի անդամները: Նշված աշխատողների, խորհրդատուների և ընտանիքի՝ խնամքի տակ գտնվող անդամների՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակության/կացության և սույն Համաձայնագրով նախատեսվող և ֆինանսավորվող աշխատանքների իրականացման համար պահանջվող փաստաթղթերի ցանկացած նորացում կամ երկարաձգում պետք է իրականացվի անվճար:

(բ) Միջոցների տրամադրումը ենթահանձնարարման, ենթապարտավորության կարգով և դրանց հատկացումը

Սույն Համաձայնագրով կատարվող հատկացումների առնչությամբ դրամաշնորհառուն համաձայնում է, որ 5.1. բաժնում սահմանված նախապայմանների ապահովումից հետո ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է 3.1(ա) բաժնի դրույթներին համապատասխան առկա դրամաշնորհի գումարը ենթահանձնարարման, ենթապարտավորության կարգով տրամադրել և հատկացնել ԱՄՆ ՄԶԳ կողմից ընտրված սուբյեկտների հետ պայմանագրերի և դրամաշնորհների միջոցով առանց հետագա հաստատման կամ համաձայնեցման այն դեպքում, երբ

նշված գործողությունները և հատկացումները համապատասխանում են 1–ին հավելվածի (Մանրամասն նկարագրություն) պայմաններին:

(գ) ԱՄՆ ՄԶԳ-ն դրամաշնորհառուին պարբերաբար տեղեկացնում է սույն համաձայնագրով ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից ուղղակիորեն կատարվող բոլոր հատկացումների մասին՝ դրամաշնորհառուին ներկայացնելով տեղեկություններ նշված հատկացման (հատկացումների) գումարի (գումարների) և նպատակի (նպատակների) վերաբերյալ: Դրամաշնորհառուին ուղղակիորեն հատկացվող դրամաշնորհի միջոցների համար անհրաժեշտ է դրամաշնորհառուի նախնական համաձայնությունը:

Հոդված 7. Այլ դրույթներ

Բաժին 7.1. Հաղորդակցություն

Սույն Համաձայնագրին համապատասխան Կողմերից ցանկացածի կողմից ներկայացվող ծանուցում, դիմում, փաստաթուղթ կամ այլ հաղորդակցություն պետք է լինի գրավոր կամ ուղարկվի հեռագրի, տելեֆաքսի, մալուխային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, որը համարվում է պատշաճ ձևով հանձնված կամ ուղարկված, եթե Կողմին ներկայացվում է հետևյալ հասցեով.

ԱՄՆ ՄԶԳ
Ում՝ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանյան առաքելության ղեկավարին
Հասցե՝ ՀՀ, Երևան 0082
Ամերիկյան պողոտա 1
ԱՄՆ Դեսպանատուն

Փոխարինող հասցե մալուխային կապի համար՝
Տելեֆաքս՝ (37410) 46 47 28
Էլ. փոստ՝ armeniacontact@usaid.gov

Դրամաշնորհառու
Ում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին
Հասցե՝ Կառավարական տուն 1

Փոխարինող հասցե մալուխային կապի համար՝

Տելեֆաքս՝ (37410) 51-75-03
Էլ. փոստ՝ headstaff@gov.am

Կողմերի միջև այլ բանի վերաբերյալ գրավոր համաձայնության բացակայության դեպքում, ամբողջ հաղորդակցությունը պետք է լինի անգլերենով: Ծանուցում ուղարկելուց հետո վերը նշված հասցեները կարող են փոփոխվել:

Բաժին 7.2. Ներկայացուցիչներ.

Սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր նպատակների իրականացման համար, դրամաշնորհառուն պետք է ներկայացված լինի ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող կամ այդ պաշտոնում գործող անձի, իսկ ԱՄՆ ՄԶԳ-ն պետք է ներկայացված լինի ի դեմս անձի՝ որպես Առաքելության տնօրեն հանդես եկող կամ այդ իրավասությամբ գործող, որոնցից յուրաքանչյուրը գրավոր կարգով կարող է լրացուցիչ ներկայացուցիչներ նշանակել համաձայնագրի պաշտոնական փոփոխությունների ստորագրումից կամ 2.2 կամ 2.3 բաժիններով նախատեսված՝ Ծրագրի բաղադրիչների, ցուցանիշների կամ 1–ին հավելվածի վերանայման լիազորությունների իրականացումից բացի այլ նպատակների համար: Դրամաշնորհառուի լրացուցիչ ներկայացուցիչների անուններն ու պաշտոնները 5.1(բ) բաժնի համաձայն տրամադրվում են ԱՄՆ ՄԶԳ-ին, որը նման լրացուցիչ ներկայացուցիչների (կամ համապատասխան պաշտոնակատարների) կողմից ստորագրված ցանկացած փաստաթուղթ, համաձայն 7.2 բաժնին համապատասխան կարող է ընդունել որպես պատշաճ կերպով լիազորված մինչև նրանց լիազորությունների դադարեցման վերաբերյալ գրավոր ծանուցում ստանալը:

Բաժին 7.3. Հավելված Ա. «Ստանդարտ Դրույթներ»

«Ստանդարտ դրույթների» վերաբերյալ հավելվածը (Հավելված 2) կցվում է սույն Համաձայնագրին և դրա անբաժանելի մասն է կազմում:

Բաժին 7.4. Կասեցումը և դադարեցումը

(ա) Կողմերից յուրաքանչյուրը կարող է ամբողջությամբ դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ մյուս կողմին երեսուն (30) օր առաջ այդ մասին գրավոր ծանուցում ներկայացնելով: ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է Համաձայնագիրը դադարեցնել նաև մասնակիորեն՝ Դրամաշնորհառուին երեսուն (30) օր առաջ այդ մասին գրավոր ծանուցում ներկայացնելով, կամ կասեցնել սույն Համաձայնագիրը ամբողջությամբ կամ մասամբ այդ մասին գրավոր ծանուցելով: Նման մասնակի կասեցումը չի ազդում

Համաձայնագրով նախատեսված այլ գործողությունների վրա, բացի կասեցված գործողություններից: Բացի դրանից, ԱՄՆ ՄԶԳ–ն կարող է սույն Համաձայնագիրը ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել՝ գրավոր ծանուցում ուղարկելով Դրամաշնորհառուին, եթե (i) Դրամաշնորհառուն չի կատարել սույն Համաձայնագրի որևէ դրույթ, (ii) ի հայտ է եկել որևէ հանգամանք, որը ԱՄՆ ՄԶԳ-ին հիմք է տալիս որոշելու, որ անհավանական է դարձել Համաձայնագրի նպատակի ու ծրագրի բաղադրիչների կամ օժանդակության ծրագրի իրականացումը կամ Դրամաշնորհառուի կողմից Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը, կամ (iii) սույնով նախատեսվող որևէ հատկացում կամ դրամական միջոցների օգտագործում կարող է հակասել տվյալ պահին գործող կամ հետագայում գործողության մեջ դրվող այն օրենսդրությանը, որով ղեկավարվում է ԱՄՆ ՄԶԳ–ն:

(բ) Բացառությամբ այնպիսի վճարումների, որոնք Կողմերը պարտավորվել են վճարել որևէ երրորդ կողմի առջև նախքան կասեցումը կամ դադարեցումը ստանձնած անչեղարկելի պարտավորությունների համաձայն, սույն ամբողջ Համաձայնագրի կամ դրա մի մասի կասեցմամբ կամ դադարեցմամբ կասեցվում (կասեցման ժամանակահատվածի համար), կամ՝ հարկ եղած դեպքում, դադարեցվում է Կողմերի՝ ֆինանսական կամ այլ միջոցներ տրամադրելու ցանկացած պարտավորություն Համաձայնագրի մասով կամ՝ կիրառելիության դեպքում, Համաձայնագրի կասեցված կամ դադարեցված մասով: Սույն Համաձայնագրի չկասեցված կամ չդադարեցված ցանկացած մաս շարունակում է լիակատար գործողության մեջ լինել:

(գ) Բացի դրանից, նման ամբողջական կամ մասնակի կասեցման կամ դադարեցման դեպքում ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է իր հաշվին հրահանգել, որ Համաձայնագրով կամ Համաձայնագրի գործող մասով ֆինանսավորվող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվի ԱՄՆ ՄԶԳ-ին, եթե ապրանքներն առաքման փուլում են:

Բաժին 7.5. Համաձայնագրի լեզուն

Համաձայնագիրը կազմված է անգլերենով և հայերենով: Երկիմաստ և ոչ հստակ ձևակերպումների կամ երկու տարբերակների միջև հակասության դեպքում հիմք է ընդունվում անգլերեն տարբերակը:

Բաժին 7.6. Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրամաշնորհառուի կողմից 5.1(ա) հոդվածի դրույթներով պահանջվող պարտավորությունը ստանձնելու մասին նրա ծանուցումը՝ ԱՄՆ ՄԶԳ–ի ներկայացմամբ, Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից ստացման ամսաթվից:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները և դրամաշնորհառուն, գործելով իրենց լիազոր ներկայացուցիչների միջոցով, կարգադրել են իրենց անունից սույն Համաձայնագրի ստորագրումը և հանձնումը վերը նշված ամսաթվին և թվականին։

Հայաստանի Հանրապետություն	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Անունը՝ Վաչե Գաբրիելյան	Անունը՝ Քարեն Հիլիարդ
Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար	Պաշտոնը՝ Առաքելության ղեկավար, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան
Ամսաթիվ՝ 28.09.2013	Ամսաթիվ՝ 28.09.2013

Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի

Հավելված 1

Մանրամասն նկարագրիր

I. Ներածություն

«Ներգրավված ու մասնակցային քաղաքացիների համար բարգավաճման և արդյունավետ կառավարման արդյունքների և դրանից բխող օգուտների հասանելիությանն» ուղղված գլոբալ նպատակի իրագործման ուղղությամբ ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանյան առաքելության կողմից սահմանվում է զարգացման երեք նպատակ, այն է՝ ներառական տնտեսական աճի ավելացում, առավել մասնակցային և արդյունավետ կառավարման համակարգերի ձևավորում և առողջապահական միջոցառումների արդյունքների բարելավում:

Երկրորդ նպատակի իրագործման համար, ԱՄՆ ՄԶԳ-ն կօժանդակի Հայաստանին՝ արագացնելու առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարման կայացման գործընթացը: Այս նպատակի իրագործման շրջանակներում ծրագրի իրականացումն առավելապես կնպաստի հետևյալ միջանկյալ արդյունքների ապահովմանը (ՄԱ).

ՄԱ1. Քաղաքացիների առավել ակտիվ մասնակցություն ժողովրդավարական և սոցիալական բարեփոխումների գործընթացին.

ՄԱ2. Առավել թափանցիկ, ճկուն և արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում:

ԱՄՆ ՄԶԳ-ն, մասնավորապես, օժանդակություն կտրամադրի բարեփոխումների ենթակա՝ Դրամաշնորհառուի կողմից գերակա ճանաչված այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացումը, կոռուպցիայի նվազեցումը և թափանցիկության ավելացումը, ինչպես նաև կենսաթոշակային համակարգի բարեփոխումները:

Սույն Հավելվածում նկարագրված են սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրվող ֆինանսավորմամբ իրականացվելիք աշխատանքները և ակնկալվող արդյունքները: Սույն Հավելվածում որևէ բան չի մեկնաբանվում որպես Համաձայնագրի նյութական պայմանների կամ սահմանումների փոփոխություն: Հավելվածում նկարագրված գործողություններից մի քանիսի իրականացումը մեկնարկել է նախորդ տարիներին, իսկ մնացած գործողությունների իրականացումը կարող է շարունակվել կամ ձեռնարկվել սույն Համաձայնագրի շրջանակներում:

II. Նախադրյալներ

Հայաստանը ճկունություն է ցուցաբերել անկախության կայացման գործընթացին հետևած տնտեսական անկման և անկայունության ծանր պայմաններում: Չնայած այս դժվարություններին՝ Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել աղքատության նվազեցման, առողջապահական ծառայությունների արդյունավետության բարձրացման, քաղաքացիական հասարակության զարգացման և տնտեսական աճի հիմքերի կայացման գործընթացում, որին ԱՄՆ ՄԶԳ-ն իր մասնակցությունն է ունեցել՝ քսան տարի շարունակ սատարելով նշված ոլորտներում իրականացվող աշխատանքներին: Այնուամենայնիվ, դեռևս առկա են զարգացման հետ կապված մարտահրավերներ, որոնք խոչընդոտում են Հայաստանի հետագա անցումը ժողովրդավարական կառավարման, ինչպես նաև խոչընդոտ են հանդիսանում երկրի լայնամասշտաբ բարգավաճումն ապահովելու գործընթացում:

Գտնվելով Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում՝ փոքր և դեպի ծով ելք չունեցող Հայաստանն աշխարհաքաղաքական առումով գտնվում է մեկուսացված դիրքում, քանի որ փակ են Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանները: Չունենալով էներգետիկ անվտանգություն, այսօր Հայաստանն իր էներգետիկ կարիքների բավարարման հարցում հենվում է հնացած ատոմակայանի և Իրանի հետ առևտրային պայմանագրերի վրա: Ռուսաստանը գերիշխող դիրք ունի երկրի ոլորտների մեծ մասում, այդ թվում՝ էներգետիկայի, տրանսպորտի, պաշտպանության, ինչպես նաև ենթակառուցվածքների ոլորտներում:

Երկրի ներսում դեռևս առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են լուրջ քաղաքական բարեփոխումները և ներառական տնտեսական աճը: Այնուամենայնիվ, առկա է նաև առաջընթաց, իսկ Դրամաշնորհառուի նախաձեռնությունները վկայում են Հայաստանում ժողովրդավարական կառավարման համակարգը կատարելագործելու հնարավորությունների մասին:

Ժողովրդավարական կառավարման համակարգի մարտահրավերները և հնարավորությունները

Մարտահրավերներ

- ***Զսպումների և հակակշիռների թույլ համակարգ.*** Կառավարման հետ կապված հիմնական մարտահրավերը համակարգում պատշաճ զսպումների և հակակշիռների բացակայությունն է, որի արդյունքում խաթարվում է օրենքի գերակայության սկզբունքը և չի ապահովվում քաղաքական գործընթացներում քաղաքացիների բավարար չափով ներգրավվածությունը:

- ***Քաղաքացիական անտարբերություն և թույլ հաշվետվողականություն.*** Ինչպես ցույց են տալիս տարբեր հարցումներն ու վերլուծությունները, քաղաքացիները գրեթե վստահություն չունեն կառավարման հաստատությունների, ինչպես նաև նմանատիպ հասարակական կազմակերպությունների նկատմամբ: Քաղաքացիական վերահսկողության թույլ մակարդակի պատճառներից է նաև այն փաստը, որ քաղաքացիների 69 տոկոսը դիտարկում է կառավարությունը որպես «ծնող», այլ ոչ որպես «հաճախորդ»: Քաղաքացիական հասարակությունը մասնատված է, էականորեն կախված դոնորներից և լայն զանգվածների կողմից չի ընկալվում որպես հանրային շահերի ներկայացուցիչ: Հաշվետվողականությունն ապահովող մեկ այլ կարևոր տարր հանդիսացող զանգվածային լրատվամիջոցները չեն ապահովում բազմակարծություն, ունեն սահմանափակ ռեսուրսներ և մասնագիտական ցածր որակավորում:

- ***Կառավարության արդյունավետություն.*** Համաշխարհային բանկի Համաշխարհային կառավարման ցուցանիշների ցանկում հավաքելով 50 տոկոս միավոր՝ Հայաստանում «կառավարության արդյունավետության» ապահովմանը խոչընդոտում են հովանավորչությունը և կոռուպցիան, որոնք հանգեցնում են կանոնակարգերի ոչ հետևողական կիրարկմանը և ծառայությունների ոչ պատշաճ մատուցմանը: Կառավարումը հիմնված է էլիտար խմբերի փոխհամաձայնության վրա՝ գրեթե բացառելով քաղաքացիական մասնակցությունն օրենսդրական, ինչպես նաև քաղաքականության ձևավորման գործընթացներում: Բոլոր ոլորտներում հիմնականում առկա են լավ մշակված օրենքներ, որոնք, սակայն, չունեն պատշաճ կիրարկում:

Հնարավորություններ

- ***Տեղական կառավարման համակարգում կարողությունների զարգացում.*** Որպես ապագայում բարեփոխումների ենթակա ոլորտ՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ընդլայնումը և կարողությունների զարգացումը կհանգեցնի ավելի մասնակցային և արդյունավետ կառավարման:

- ***Կառավարության բարեփոխումները.*** Վերջին տարիներին Հայաստանում որոշակի առաջընթաց է գրանցվել կոռուպցիայի դեմ պայքարի, հարկային վարչարարության բարելավման և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու գործընթացներում: Նախկինում իրականացված աշխատանքները կարող են հիմք հանդիսանալ շարունակվող՝ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների համար:

- ***Էթիկա և կոռուպցիայի դեմ պայքար.*** Կառավարության՝ ինչպես ավանդական եղանակով, այնպես էլ առցանց տեխնոլոգիաների միջոցով իրականացվող կոռուպցիայի դեմ պայքարի և թափանցիկության խթանման գործընթացում ունեցած ձեռքբերումները հնարավորություններ են ստեղծում ավելի արդյունավետորեն վերահսկելու կառավարության կողմից կատարված ծախսերը և իրականացված ծրագրերը:

- ***Քաղաքացիական մասնակցություն.*** Կառավարության կողմից կազմակերպվում են միջոցառումներ և հանրային ծառայություններ, որոնք համակցված են քաղաքացիական ակտիվիզմի նոր ձևերի հետ և ուղղված են ապահովելու քաղաքացիների ներգրավվածությունը: Նշված միջոցառումներն ու ծառայությունները կազմակերպելիս հնարավոր է օգտվել սոցիալական լրատվամիջոցներից և այլ տեխնոլոգիաներից՝ քաղաքացիական մասնակցությունն ընդլայնելու նպատակով:

III. Զարգացման նպատակ

Դեպի առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարում

Կառավարման համակարգի բարելավումը չափազանց կարևոր նշանակություն ունի երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի կայունության և բարգավաճ զարգացման ապահովման և պահպանման համար: Հաշվի առնելով նշվածի կարևորությունը՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից որպես զարգացման նպատակ է

սահմանվում առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման հնարավորությունների ընդլայնումը: Տվյալ նպատակի իրականացման հիմքում ընկած գաղափարն այն է, որ եթե (i) քաղաքացիներն ավելի ներգրավված լինեն Դրամաշնորհառուի կողմից իրականացվող գերակա բարեփոխումների գործընթացում և մշտադիտարկման կարգով հետևեն դրանց ընթացքին, և (ii) քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման գործընթացներն առավել թափանցիկ լինեն և ուղղված լինեն քաղաքացիների կարիքների արձագանքմանը, ապա կառավարումն առավել բարելավված կդառնա՝ լինելով ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետու:

Մրցակցությունը դիտարկելով լայն իմաստով՝ ԱՄՆ ՄԶԳ-ն նոր ուղիներով ու մեթոդներով կգործի՝ բարելավելու համար գաղափարների մրցակցությունը տեղեկատվության հասանելիության և մասնակցության ու քննարկումների հնարավորությունների խթանման համապատասխան մեխանիզմների ապահովման միջոցով, ինչպես նաև բարելավելու համար մրցակցությունը իշխանության ճյուղերի և օղակների միջև՝ հաշվետվողականության միջոցով:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից զարգացման նպատակի իրագործումն ապահովվելու է համալիր արդյունքների համախմբի միջոցով. ՀԱ 2.1 համախմբի շրջանակներում նախատեսվում է ռեսուրսների ուղղում «պահանջարկը ներկայացնող կողմին» անհրաժեշտ վերջնարդյունքներին (քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվածության, մասնակցության և ազդեցության մեծացում, կառավարության գործունեության նկատմամբ մոնիտորինգի և վերահսկողության իրականացման բարելավում), իսկ ՀԱ 2.2 համախումբն ուղղված է «առաջարկը ներկայացնող կողմին» անհրաժեշտ վերջնարդյունքների ապահովմանը (պետական քաղաքականության և դրա իրականացման թափանցիկության և արդյունավետության բարելավում):

ԱՄՆ ՄԶԳ-ն կսատարի ռազմավարական քաղաքականության բարեփոխումների այն ոլորտները, որոնք ՀՀ Կառավարության կողմից ճանաչվել են որպես գերակա ոլորտներ, այն է՝ արդյունավետ կառավարում, տեղական ինքնակառավարում և սոցիալական բարեփոխումներ, ներառյալ կենսաթոշակային նոր համակարգի ներդրում և սոցիալական ինտեգրման խթանման քաղաքականություն: Բարեփոխումները որպես գործիք օգտագործելու միջոցով Առաքելությունը կնպաստի քաղաքացիական հասարակության և կառավարման

մարմինների շրջանում մի շարք կարողությունների, ինստիտուտների և մեխանիզմների ձևավորմանն ու զարգացմանը, որոնց միջոցով կապահովվի բարեփոխումների իրականացման և ընդհանուր առմամբ կառավարման էական բարելավումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումը խթանելու լավագույն հնարավորությունը տեղական մասշտաբի հարթությունում աշխատելն է, որտեղ առկա է անմիջապես և ուղղակի շփում քաղաքացիների և կառավարման մարմինների միջև, ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից կհզորացվեն տեղական ինքնակառավարման համակարգերը, կառավարությանն օժանդակություն կտրամադրվի վերջինիս ծրագրերի իրականացման հարցում, որոնք ուղղված են համայնքային մարմինների դերի և նշանակության ավելացմանը: Տեղական մակարդակում ժողովրդավարական կառավարման կարողությունների հզորացման գործում արձանագրված առաջընթացը կարող է որպես օրինակ ծառայել համապետական մակարդակում մասնակցային և հաշվետու կառավարման համակարգերի համար: Քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները՝ որպես քարոզչություն և վերահսկողություն իրականացնողներ, կարող են առանցքային նշանակության դերակատարում ունենալ բարեփոխումների իրականացման հարցում կառավարության աշխատանքի արդյունավետության նկատմամբ վերահսկողության ապահովման գործում, միաժամանակ խթանելով կառավարության՝ բարեփոխումներին ուղղված ջանքերի առաջընթացը գնահատելու սեփական կարողությունները:

Գործունեության արդյունքների և դրանց ազդեցության մոնիտորինգի համար անհրաժեշտ արդյունավետ և համապարփակ ծրագիրը առանցքային նշանակություն է ունենալու ԱՄՆ ՄԶԳ նոր մոտեցումների և գործելակերպի համար: Այս հանձնառության շրջանակներում կնախատեսվի անկանխատեսելի իրավիճակներից բխող գործողությունների պլանավորում, զարգացման նպատակի և միջանկյալ արդյունքների ապահովման համար կոնկրետ և չափելի ցուցանիշների և փուլային արդյունքների գնահատման ստուգիչ չափորոշիչների սահմանում, որոնցով հնարավոր կլինի արտացոլել վերջնարդյունքները և որոնք հնարավոր է ստուգել գնահատման, արագացված կարգով ստուգումների և հանրային կարծիքի հարցումների միջոցով:

Ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարման կարելի է հասնել հետևյալի միջոցով.

ՄԱ 1. Ժողովրդավարական և սոցիալական բարեփոխումների գործընթացում քաղաքացիների ներգրավվածության ավելացում, և

ՄԱ 2. Քաղաքականության ձևավորման և իրականացման առավել թափանցիկ, արձագանքող և արդյունավետ մոտեցումներ:

Միջանկյալ արդյունք 1. Ժողովրդավարական և սոցիալական բարեփոխումների գործընթացում քաղաքացիների ներգրավվածության ավելացում

Քաղաքացիական հասարակության հաստատությունները չափազանց կարևոր դերակատարում ունեն պետական քաղաքականության վերաբերյալ մտքերի փոխանակման և քննարկումների համար մեխանիզմների ապահովման, ինչպես նաև ժողովրդավարական և սոցիալական զարգացման համար ներառական, մասնակցային մոտեցումների արդյունավետության ապահովման համար: Քաղաքացիական կազմակերպությունները, փորձագետները և լրատվական դաշտում գործող տարբեր գործիչները կարևոր դերակատարում ունեն հանրության և կառավարման մարմինների շրջանում առանցքային հարցերի լուսաբանման գործում: Լավ տեղեկացված և քաղաքականության, ծրագրերի և տրամադրվող ծառայությունների հարցում հետաքրքրություն ցուցաբերող քաղաքացիական բնակությունն կարող է խթան լինել կառավարության հաշվետվողական գործունեության համար: Բացի դրանից, քաղաքացիական հասարակության դերը պետական և տեղական կառավարման մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում բավականին կարևոր է ՀՀ Կառավարության կողմից քաղաքացիների և համայնքների համար նպաստավոր քաղաքականության իրականացումն ապահովելու համար:

Տիպային օրինակելի գործունեություն

ԱՄՆ ՄԶԳ-ն կնպաստի քաղաքացիական շահերի համախմբման և դրանց պաշտպանության հարցում քաղաքացիական հասարակության կարողությունների հզորացմանը՝ այդպիսով նպաստելով նրանց լեգիտիմության և դոնոր

ֆինանսավորումից անկախ գործելու հնարավորությունների մեծացմանը: Որպես թիրախ ընտրելով գյուղական վայրերը՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից աշխատանքներ կիրականացվեն մասնակցության, թափանցիկության/հաշվետվողականության և պատշաճ կառավարման բարելավման ուղղությամբ: Տրամադրվող օժանդակությունը կնպաստի քաղաքացիական ներգրավվածության նոր տեսակների ձևավորմանը, հասարակական գործիչների՝ քաղաքականության ձևավորման փորձի կատարելագործմանը, այլընտրանքային և հուսալի լրատվամիջոցների և տեղեկատվության աղբյուրների հասանելիության ավելացմանը, պետական քաղաքականության մասին քաղաքացիների իրազեկվածության և ընկալման բարելավմանը: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից կիրառվող մոտեցմամբ նպատակ է հետապնդվում ընդլայնելու այն ընդհանուր հարթակը, որտեղ մեկտեղվում են կառավարության բարեփոխումներն ու քաղաքացիների ներգրավվածությունը՝ ապահովելով քաղաքացիների համար տեղեկատվության վստահելի աղբյուրների հասանելիությունը և քաղաքացիական ոլորտի սուբյեկտների կարողությունների զարգացում, նրանց միջև գործողությունների համակարգման և կապերի ձևավորման հնարավորությունների զարգացմանը: Ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերը ներկայացնող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ԱՄՆ ՄԶԳ-ն կտրամադրի ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են նրանց նկրտումների ձևակերպման, նպատակների իրագործմանն աջակցելու և այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ բարեփոխումները խթանելու համար: ԱՄՆ ՄԶԳ-ի ուշադրությունն ուղղված կլինի քաղաքացիական և քաղաքական կյանքում ավելի մեծ դերակատարում ունենալու համար երիտասարդությանը և կանանց տրամադրվող աջակցությանը:

Քաղաքական հասարակության՝ առավել արդյունավետ վերահսկողության իրականացման կարողությունների զարգացման համար ԱՄՆ ՄԶԳ-ն օժանդակություն կտրամադրի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, այդ թվում՝ ՀԿ-ներին, հիմնադրամներին, գիտական և հետազոտական կենտրոններին, համայնքային կազմակերպություններին, ավանդական լրատվամիջոցներին և սոցիալական կայքերին՝ համակարգված, փաստերի վրա հիմնված մեթոդներով կառավարման մարմինների գործունեության, պետական մակարդակով բարեփոխումների ընթացքի մոնիտորինգի, դրանց ազդեցության գնահատման և պետական պաշտոնյաների պատասխանատվության սահմանման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման համար:

Տրամադրվող օժանդակությունը կարող է ներառել.

- քաղաքացիներին համախմբելու և նրանց շահերն արտահայտելու՝ քաղաքացիական հասարակության կարողությունների բարելավում.
- քաղաքացիների համար անկախ և վստահելի տեղեկատվության հնարավորությունների ավելացում.
- քաղաքացիական հասարակության կայուն զարգացման համար նպաստավոր մթնոլորտի ձևավորում.
- քաղաքացիական հասարակության մեխանիզմների ձևավորում՝ առաջընթացի մոնիտորինգի և համապետական մասշտաբի բարեփոխումների վրա ներազդելու համար:

<u>Միջանկյալ արդյունք 2. Ավելի թափանցիկ, արագ արձագանքող և արդյունավետ քաղաքականության ձևավորում և իրականացում</u>

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից նոր ուղի կնախատեսվի արդյունավետ կառավարման համակարգերի բարելավման հարցում իր որդեգրած մոտեցումների համար: Ինչպես նշված է սույն համաձայնագրում, ԱՄՆ ՄԶԳ-ի օժանդակությունը կուղղվի կառավարման այն ոլորտներին, ինչպիսին է տեղական ինքնակառավարման ոլորտը, որտեղ բարեփոխումները փոխհամաձայնեցված են և ունեն քաղաքացիների վրա շոշափելի ազդեցություն ունենալու ներուժ: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից տրամադրվող օժանդակությունը կնպաստի համապետական և տեղական մակարդակներում ՀՀ Կառավարության տեխնիկական և վարչական կարողությունների զարգացմանը՝ բարեփոխումների իրականացման նպատակով, աջակցության տրամադրմանը՝ ուղղված քաղաքացիների ներգրավվածության, թափանցիկության, բյուջեի պլանավորման կարողությունների, ֆինանսական հաշվետվողականությանը և հանրային իրազեկման բարելավմանը: Արդյունքում՝ կբարելավվի կառավարման համակարգերի արդյունավետությունը և կընդլայնվեն որոշումների կայացման հարցում քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորությունները և կբարելավվի տեղեկատվության հասանելիությունը:

Տիպային օրինակելի գործունեություն

Օժանդակություն կցուցաբերվի Դրամաշնորհառուի՝ քաղաքականության մշակման համար պատասխանատու հաստատություններին, ներառյալ պատկան նախարարություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և Ազգային ժողովին: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից աշխատանքներ կիրականացվեն ինչպես կենտրոնական կառավարության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ քաղաքացիական մասնակցության և թափանցիկության ավելացման մեխանիզմների և գործընթացների հաստատման և հզորացման նպատակով: ԱՄՆ ՄԶԳ-ն օժանդակություն կտրամադրի առաջընթացի արձանագրման համար անհրաժեշտ՝ փոխադարձ համաձայնեցված հենանիշերի ապահովման հարցում: Կանոնավոր կերպով անցկացվող ընդհանուր խորհրդակցությունները, քաղաքականության և օրենսդրության նախագծերի հրապարակումը, էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդնումը, մասնակցությունը խթանող ընթացակարգերի մշակումն այն մեխանիզմների օրինակներն են, որոնց միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից աջակցություն կտրամադրվի քաղաքացիական հասարակություն-պետություն համագործակցության խթանման համար: Քանի որ Ազգային ժողովին է պատկանում քաղաքականության մշակման հիմնական դերակատար լինելու ներուժը, ապա ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից աջակցություն կտրամադրվի խորհրդարանական հանձնաժողովներին՝ օրենսդրական գործընթացներում քննարկումների, հանրության մասնակցության, փաստերի վրա հիմնված վերլուծությունների և աշխատանքային կարողությունների հզորացման համար:

Ինչ վերաբերում է ապակենտրոնացման խթանմանը և տեղի ինքնակառավարման կարողությունների հզորացմանը, ապա ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է տեխնիկական օժանդակություն տրամադրել Տարածքային կառավարման նախարարությանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանն ու գյուղական բնակավայրերի զարգացմանն ուղղված պետական ռազմավարական ծրագրերի իրականացման հարցում՝ մասնակցության վրա հիմնված մոտեցումների խթանման, եկամուտների գոյացման հնարավորությունների ավելացման և ֆինանսական ռեսուրսների կառավարման միջոցով: Ինչ վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարում պետության կողմից իրականացվող ջանքերին ուղղված աջակցությանը, ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից կարող է նաև օժանդակություն տրամադրվել Արդարադատության նախարարությանը էլեկտրոնային կառավարման հանրային ծառայությունների համակարգի ներդրման համար, կամ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին՝ նրա կազմակերպական տեսանկյունից հզորացնելու և իր գործառութային

նպատակների ավելի արդյունավետ իրագործումն ապահովելու նպատակով: ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանյան գրասենյակը կարող է նաև կարևոր դերակատարում ունենալ կայուն կենսաթոշակային համակարգի կառավարման համար պետական համապատասխան հաստատություններին օժանդակելու հարցում: Այս կարևոր սոցիալական բարեփոխումը կավելացնի հանրային վստահությունը հանրային ծառայությունների նկատմամբ, ինչպես նաև կբարելավի կառավարության արդյունավետությունն ու ազգային ծրագրի կայուն ծառայությունների տրամադրումը:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից օժանդակություն կտրամադրվի կառավարության, քաղաքացիների, լրատվամիջոցների և քաղաքացիական գործիչների կողմից ժողովրդավարական բարեփոխումների իրականացման արյունավետ մշտադիտարկման մեխանիզմների ու հաստատությունների ձևավորման և հզորացման հարցում: Եթե բարեփոխումների ծրագրերի մշակումը, նախագծումը և իրականացումը մոնիտորինգի ենթարկվեն թե՛ կառավարության, և թե՛ հասարակական կազմակերպությունների կողմից, ապա ավելի հավանական կդառնա դրանց լիարժեք իրականացումը՝ շարժիչ ուժ հանդիսանալով հետագա բարեփոխումների համար: Լրատվամիջոցները կարևոր դերակատարում կարող են ունենալ բարեփոխումների մշտադիտարկման հարցում, ինչպես և փորձագետներն ու շահագրգիռ կողմերը:

Տրամադրվող օժանդակությունը կարող է ներառել հետևյալը.

- պետական հաստատությունների քաղաքացիական մոնիտորինգի համար անհրաժեշտ ընթացակարգերի և մեխանիզմների հզորացում.
- բաց և մասնակցային ընթացակարգեր կիրառելու հարցում Կառավարության կարողությունների բարելավում.
- ծառայությունների տրամադրման և որոշումների կայացման ընթացակարգերն առավել թափանցիկ դարձնելու հարցում համայնքային մարմինների տեխնիկական կարողությունների հզորացում.

- պետական օժանդակությամբ գործող մեխանիզմների մշակում՝ ազգային մասշտաբով բարեփոխումների առաջընթացի մշտադիտարկման և դրանց ազդեցության գնահատման համար:

IV. Ցուցանիշներ

Կողմերը առաջընթացը գնահատում են Միջանկյալ արդյունքների և Զարգացման նպատակների ուղղությամբ հետևյալ ցուցանիշների բարելավման միջոցով.

- Ֆրիդոմ Հաուզ՝ «Անցումային երկրներ». ընդհանուր միավոր
- Կոռուպցիայի ընկալման ինդեքս
- Ֆրիդոմ Հաուզ՝ «Անցումային երկրներ». Քաղաքացիական հասարակություն
- ՀԿ-ների կայունության ինդեքս, Շահերի պաշտպանություն, Մամուլի կայունության ինդեքս, Խոսքի ազատություն
- Ֆրիդոմ Հաուզ՝ «Անցումային երկրներ». Տեղական կառավարում
- ԵՄ-ի GRECO –ի իրականացում՝ համապատասխանության միավոր
- Համընդհանուր բարեխղճության միավոր *(Global Integrity Scorecard)*
- Թրանսփարենսի Ինթերնեշնլ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր
- Համաշխարհային Բանկ, *Governance Matters.* կառավարման համակարգերի արդյունավետություն, կոռուպցիայի դեմ պայքար, և խոսքի ազատության և հաշվետվողականության ցուցանիշներ:

V. Թիրախներ

Կողմերը իրականացման փոխադարձ նամակների միջոցով սահմանում են թիրախներ և փոփոխություններ կատարել դրանցում:

VI. Կողմերի դերակատարումն ու պարտականությունները

1. <u>ԱՄՆ ՄԶԳ</u>

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից վերը նշված IV բաժնում նկարագրված աշխատանքները կիրականացվեն սույն համաձայնագրով հանձնառված դրամական միջոցներով մասնավոր ընկերությունների, հասարակական կամ պետական կազմակերպությունների և (կամ) ՀՀ գերատեսչությունների հետ պայմանագրերի, համագործակցության համաձայնագրերի և դրամաշնորհային պայմանագրերի կնքման միջոցով: Դա կիրականացվի ուղղակի պայմանագրերի և դրամաշնորհների

համար ԱՄՆ ՄԶԳ ընթացակարգերին և կանոնակարգերին համապատասխան: Նշված աշխատանքների իրականացումը ԱՄՆ ՄԶԳ-ն կհամակարգի ՀՀ Կառավարության ներկայացուցիչների հետ և հնարավորության դեպքում կաշխատի դրանք իրականացնել հայաստանյան ընկերությունների, հասարակական և պետական կազմակերպությունների միջոցով:

Համաձայնագրով իրականացվելիք աշխատանքների նախանշման և ընտրության վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ-ն քննարկումներ կանցկացնի ՀՀ Կառավարության աշխատակազմի և դոնոր համայնքի հետ:

Սույն համաձայնագրով իրականացվելիք՝ Դրամաշնորհառուին տրամադրվող ուղղակի օժանդակություն ներառող բոլոր աշխատանքները ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի գրասենյակի կողմից համաձայնեցվելու են Դրամաշնորհառուի հետ, բացի դրանից, Դրամաշնորհառուն ներգրավելու է այդ աշխատանքների ծրագրային նախագծման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում:

<u>Տեղական ինքնակառավարման կարողությունների բարելավում</u>

ա. Նախքան ապակենտրոնացման հստակ քաղաքականության ընդունումը (որում մանրամասն ներկայացվելու է ՀՀ Կառավարության քաղաքականությունը համայնքների խոշորացման, միջհամայնքային միավորումների կամ համայնքների իրավունքների, պարտականությունների, լիազորությունների և ֆինանսավորման այլ միջոցների համախմբման վերաբերյալ), ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից օժանդակություն կտրամադրի Տարածքային կառավարման նախարարությանը նշված քաղաքականության ձևավորման գործընթացում:

բ. Վերը ներկայացված «ա» կետում նշված քաղաքականությունը՝ մինչև 2013 թվականի սեպտեմբերի 30–ն ընդունումից հետո ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից կշարունակվեն Տարածքային կառավարման նախարարության կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները՝ քաղաքականության իրականացման համար:

<u>Թափանցիկություն և հաշվետվողականություն</u>

ա. ԱՄՆ ՄԶԳ-ն տեխնիկական և նյութական օժանդակություն կտրամադրի՝ ուղղված Դրամաշնորհառուի հանրային ծառայությունների բարեփոխումների իրականացմանը:

բ. ԱՄՆ ՄԶԳ-ն կտրամադրի տեխնիկական և նյութական օժանդակություն Էթիկայի հանձնաժողովին և Հակակոռուպցիոն հանձնաժողովին: ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից

Էթիկայի հանձնաժողովին օժանդակության տրամադրման նախապայմանն է վերջինիս՝ Նախագահի վարչակազմից առանձին գրասենյակ ունենալը և Քարտուղարության աշխատակազմի համար պետական բյուջեից հատկացումը:

գ. ԱՄՆ ՄԶԳ-ն տեխնիկական օժանդակություն կտրամադրի իրազեկողների պաշտպանության օրենսդրության մշակման համար:

դ. ԱՄՆ ՄԶԳ-ն տեխնիկական օժանդակություն կտրամադրի Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի գործառույթների և ՀՀ Կառավարության հետ կապի վերափոխման առնչությամբ:

Քաղաքացիական հասարակություն

ա. ԱՄՆ ՄԶԳ-ն տեխնիկական փորձագետներ կտրամադրի Արդարադատության նախարարությանը և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ բարենպաստ միջավայրի ձևավորման վերաբերյալ առաջարկությունների իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական և կանոնակարգիչ փոփոխությունների մշակման հարցում օժանդակություն տրամադրելու համար:

2. ՀՀ Կառավարություն

Տեղական ինքնակառավարման կարողությունների ընդլայնում

ա. Տեղական ինքնակառավարման կարողությունների ընդլայնման վերաբերյալ ռազմավարական փաստաթղթում նշված բարեփոխման իրականացման նպատակով Դրամաշնորհառուի կողմից կիրականացվի հետևյալը.

- խոշորացման, միջհամայնքային համագործակցության կամ նման այլ մոտեցումների վերաբերյալ հստակ քաղաքականության մշակում համայնքի իրավունքների, պարտականությունների, լիազորությունների և ֆինանսավորման սահմանման համար.
- տեղական ինքնակառավարման մարմինների մասին նոր օրենքի ներկայացում.
- Համահարթեցման մասին օրենքի ընդունման խթանում.
- գույքի նկատմամբ տեղական հարկի մասին օրենքի ներկայացում.
- պետական բյուջեի միջոցներից համայնքային վարկավորման մեխանիզմների ներդնում.
- տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման համար համայնքային ծառայության բարեփոխումների ներմուծում.
- տեղական ինքնակառավարման մարմինների համար գնումների վերաբերյալ կանոնակարգերի բարելավում:

բ. Դրամաշնորհառուն կներկայացնի և կընդունի հետևյալ օրենքները (օրենսդրական փաթեթ)՝ հետևյալ ժամանակացույցի համաձայն.

Օրենսդրություն	Ազգային ժողով ներկայացման և վերջինից կողմից ընդունման ամսաթիվը
Համապատասխան օրենքներում լրամշակումների կատարում՝ համայնքային վարկավորման մեխանիզմների հաստատման համար	30 հունիսի, 2014թ.
Համապատասխան օրենքներում լրամշակումների կատարում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար գնումների պահանջների և գործընթացների բարեփոխումների համար	30 ÑáõÝÇëÇ , 2014թ.
Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից հատկացվող միջոցների համահարթեցման մասին օրենքի ընդունում	31 դեկտեմբերի, 2014թ.
Տեղական ինքնակառավարման մասին օրենքի ընդունում	31 դեկտեմբերի, 2014թ.
Համապատասխան օրենքներում լրամշակումների կատարում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման նպատակով համայնքային ծառայության բարեփոխումների առաջընթացի ապահովման համար	31 դեկտեմբերի, 2014Ã.
Համայնքային բյուջեների եկամտային մասի ավելացումն ապահովելու համար իրականացնել միջոցառումներ՝ հարկային վարչարարության ոլորտում:	31 դեկտեմբեր, 2014թ.
Աջակցություն համայնքների	31 դեկտեմբեր 2015թ.

խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացմանը	
Աջակցություն տարածքային համաչափ զարգացման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման համատեքստում	31 դեկտեմբեր 2015թ.

Թափանցիկություն և հաշվետվողականություն

ա. Դրամաշնորհառուն պարտավորվում է մեկնարկել ԱՄՆ ՄԶԳ օժանդակությամբ իրականացվող բարեփոխումների շրջանակներում հանրային ծառայությունների թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության խթանմանն ուղղված սկզբունքների իրականացումը.

բ. Դրամաշնորհառուն կապահովի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անկախությունը՝ նրա գործունեության համար 2014 ֆինանսական տարվա բյուջեից հատկացումների և առանձին շենքային տարածքների տրամադրման միջոցով.

գ. Դրամաշնորհառուն համաձայնում է իրականացնել շահագրգիռ կողմերի հետ հանրային քննարկումներ՝ իրազեկիչների պաշտպանության մասին օրենքի ընդունման վերաբերյալ և հրապարակել առաջարկվող օրենքի նախագիծը համաձայնեցված ժամկետներում.

դ. Դրամաշնորհառուն նվազագույնի կհասցնի վարչական և պետական ռեսուրսների օգտագործումը տեղական կամ համապետական մասշտաբի ընտրությունների ժամանակ թեկնածուներից կամ քաղաքական կուսակցություններից որևէ մեկին սատարելու նպատակով:

ե. Ազգային ժողովը կծառայի որպես իշխանության անկախ ճյուղ, որտեղ հասարակայնության հետ կապերի և իրազեկման միջոցով ապահովվում են հնարավորություններ բանավեճի, հանրային լսումների կազմակերպման և քաղաքացիների ներգրավվածության և շահերի առումով:

Քաղաքացիական հասարակություն

Դրամաշնորհառուն համաձայնում է ընդունել քաղաքացիական հասարակությանը համար նպաստավոր միջավայր ապահովող օրենսդրություն համաձայնեցված ժամկետներում, ինչպիսին են.

- օրենսդրության փոփոխություններ՝ նախատեսելով ուղղակի եկամտի ձևավորման հնարավորություններ շահույթ չհետապնդող բոլոր տեսակի կազմակերպությունների համար.

- օրենսդրության մշակում (նոր օրենք և (կամ) գործող օրենքի փոփոխություններ), որով շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար դյուրացվում է նպատակային ֆինանսավորման հնարավորությունների օգտագործումը.
- շահույթ չհետապնդող կազմակերպությունների վերադասակարգում՝ ըստ նրանց տեսակի և նպատակի.
- օրենսդրության մշակում՝ կամավորության սկզբունքի խթանման և դյուրացման համար իրավական մեխանիզմների ձևավորման նպատակով.
- օրենսդրության մեջ փոփոխությունների կատարում և տեխնիկական լուծումների մշակում և իրականացում՝ ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թափանցիկության ավելացմանը, առանց զեկուցելու անհարկի բեռի ստեղծման և միջազգային լավագույն գործելակերպերին և ստանդարտներին համապատասխան:

Լրատվամիջոցներ

- Դրամաշնորհառուն պարտավորվում է պահպանել ազատ լրատվամիջոցների սկզբունքները՝ հիմնվելով տեղեկատվության հասանելիության, ինչպես նաև մտքերի և կարծիքների բազմազանության վրա (ժամկետները կհամաձայնեցվեն):

VII. Ֆինանսավորում

[redacted]

աշխատանքների գնահատման հենանիշերը և թիրախային ցուցանիշները: Առաջընթացը կգնահատվի ամենամյա կտրվածքով: Թիրախային այդ ցուցանիշների միջոցով նպատակ է հետապնդվում ընդհանուր պատկերացում կազմել այն մասին, թե բավարար տեմպերով առաջընթաց ապահովվում է արդյոք ծրագրի իրականացման գործում, որով կարելի է հիմնավորել օժանդակության տրամադրման շարունակելիությունը: Մոնիտորինգի, կառավարման և գնահատման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ներառված է սույն Համաձայնագրի ընդհանուր բյուջեում:

Հավելված 1

Աղյուսակ Ա

Ֆինանսական պլան.

Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարում

Ժողովրդավարություն և կառավարում

Նպատակը	Ծրագրի ոլորտը	2012 ֆինանսական տարվա պարտավորությունները
Արդար և ժողովրդավարական կառավարում	Պատշաճ կառավարում	1,160,000
	Քաղաքացիական հասարակություն	1,188,881
Ծրագրի մշակման և ծրագրի կառավարման ծախսերը	Կառավարում և վերահսկողություն	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ		2,488,881

ՍՏԱՆԴԱՐՏ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բովանդակություն

Հոդված Ա. Սահմանումներ և իրականացման մասին նամակներ
Բաժին Ա.1. Սահմանումներ
Բաժին Ա.2. Իրականացման մասին նամակներ

Հոդված Բ. Ընդհանուր պարտավորվածություններ
Բաժին Բ.1. Խորհրդատվություն
Բաժին Բ.2. Համաձայնագրի կատարում
Բաժին Բ.3. Ապրանքների և ծառայությունների օգտագործում
Բաժին Բ.4. Հարկում
Բաժին Բ.5. Հաշվետվություններ և տեղեկություններ, Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքեր և գրանցամատյաններ, աուդիտներ ու տեսչական ստուգումներ
Բաժին Բ.6. Տեղեկատվության ամբողջականություն
Բաժին Բ.7. Այլ վճարումներ
Բաժին Բ.8. Տեղեկատվություն և նշագրում

Հոդված Գ. Գնումների վերաբերյալ դրույթներ
Բաժին Գ.1. Աղբյուր և ծագում
Բաժին Գ.2. Համապատասխանելիության ամսաթիվ
Բաժին Գ.3. Պլաններ, մասնագրեր, պայմանագրեր
Բաժին Գ.4. Ողջամիտ գին
Բաժին Գ.5. Ծանուցում հնարավոր մատակարարներին
Բաժին Գ.6. Փոխադրում
Բաժին Գ.7. Ապահովագրություն
Բաժին Գ.8. ԱՄՆ կառավարությանը պատկանող հավելյալ գույք

Հոդված Դ. Հատկացումներ
Բաժին Դ.1. Հատկացման ձևեր
Բաժին Դ.2. Փոխարժեք

Հոդված Ե. Դադարեցում. իրավական միջոցներ
Բաժին Ե.1. Կասեցում և դադարեցում
Բաժին Ե.2. Միջոցների վերադարձ
Բաժին Ե.3. Իրավական միջոցներից հրաժարման բացառում
Բաժին Ե.4. Իրավունքի փոխանցում

Հոդված Զ. Այլ դրույթներ
Բաժին Զ.1. Ներդրումների խթանում
Բաժին Զ.2. Արգելք թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված անձանց աջակցելու վերաբերյալ
Բաժին Զ.3. Աշխատողների իրավունքներ
Բաժին Զ.4. Միաբեկչության ֆինանսավորում
Բաժին Զ.5. Արգելք միջազգային համաժողովներում օտարերկրյա կառավարությունների պատվիրակությունների ֆինանսավորման վերաբերյալ

ՍՏԱՆԴԱՐՏ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված Ա. Սահմանումներ և իրականացման մասին նամակներ

Բաժին Ա.1. Սահմանումներ

Սույն հավելվածում օգտագործվելիս «Համաձայնագիրը» վերաբերում է Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրին, որին կցված է և որի անբաժանելի մասն է կազմում սույն հավելվածը: Սույն հավելվածում գործածվող տերմինների իմաստը կամ նշանակությունը նույնն է Համաձայնագրում տրված իմաստի կամ նշանակության հետ:

Բաժին Ա.2. Իրականացման մասին նամակներ

Համաձայնագրի իրականացման հարցում դրամաշնորհառուին օգնելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն ժամանակ առ ժամանակ կներկայացնի իրականացման մասին նամակներ («Իրականացման մասին նամակներ»), որոնցով լրացուցիչ տեղեկություններ կտրամադրվեն Համաձայնագրով սահմանված հարցերի վերաբերյալ: Կողմերը կարող են իրականացման մասին փոխադարձաբար համաձայնեցված նամակներ ներկայացնել սույն Համաձայնագրի առանձին հայեցակետերի իրականացման առնչությամբ իրենց փոխհամաձայնությունը հաստատելու և արձանագրելու վերաբերյալ: Իրականացման նամակներ կարող են նաև ներկայացվել նաև Համաձայնագրով թույլատրվող փոփոխությունների կամ բացառությունների արձանագրման համար:

Հոդված Բ. Ընդհանուր պարտավորվածություններ

Բաժին Բ.1. Խորհրդատվություն

Կողմերը համագործակցություն են իրականացնում սույն Համաձայնագրի նպատակի ու ծրագրի բաղադրիչների իրագործումն ապահովելու համար: Այդ նպատակով Կողմերը՝ մեկը մյուսի խնդրանքով, կարծիքներ են փոխանակում նպատակի ու ծրագրի բաղադրիչների գծով առաջընթացի, սույն Համաձայնագրով պարտավորությունների կատարման, Համաձայնագրի ներքո ներգրավված խորհրդատուների, կապալառուների կամ մատակարարների գործունեության, ինչպես նաև Համաձայնագրին առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

Բաժին Բ.2. Համաձայնագրի կատարում

Դրամաշնորհառուն պետք է.

(ա) իրականացնի Համաձայնագիրը և ուղղակիորեն Դրամաշնորհառուի կողմից կատարման (կամ դրանց կատարումն ապահովելու) ենթակա աշխատանքները կամ ապահովի, որ Համաձայնագիրը և այդ աշխատանքներն իրականացվեն պատշաճ և արդյունավետ կերպով՝ տեխնիկական, ֆինանսական, կառավարման պատշաճ գործելակերպերին համապատասխան, ինչպես նաև այն փաստաթղթերին, պլաններին, մասնագրերին, պայմանագրերին, ժամանակացույցներին, այլ պայմանավորվածություններին և դրանց փոփոխություններին համապատասխան, որոնք սույն Համաձայնագրի համաձայն հաստատվել են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից, և

(բ) ապահովի կառավարման գծով որակավորված և փորձառու կադրերի ներգրավումը, անհրաժեշտության դեպքում ապահովելով նրանց վերապատրաստումը, սույն Համաձայնագրով ֆինանսավորվող գործողությունների իրականացման և կառավարման համար, ինչպես նաև՝ շարունակական գործողությունների դեպքում ապահովի դրանց իրականացումն ու կառավարումն այնպես, որ ապահովվի սույն Համաձայնագրով նախատեսվող նպատակի ու ծրագրի բաղադրիչների շարունակական ու արդյունավետ կենսագործումը:

Բաժին Բ.3. Ապրանքների և ծառայությունների օգտագործում

Սույն Համաձայնագրով ֆինանսավորվող ցանկացած ապրանք և ծառայություն, եթե ԱՄՆ ՄԶԳ-ի հետ այլ բանի մասին գրավոր պայմանավորվածություն չկա, պետք է նախատեսվի բացառապես Համաձայնագրի համար մինչ Համաձայնագրի ավարտը կամ դադարեցումը, իսկ դրանից հետո (ինչպես նաև Համաձայնագրի կասեցման ցանկացած ժամանակահատվածում) պետք է օգտագործվի Համաձայնագրով նախատեսված նպատակի հետագա իրագործման համար կամ իրականացման մասին նամակներով ԱՄՆ ՄԶԳ –ի կողմից տրված հրահանգներին համապատասխան:

Բաժին Բ.4. Հարկում

(ա) Ընդհանուր հարկազատում

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրի (1992թ. երկկողմ համաձայնագիր) համաձայն, սույն Համաձայնագիրը և դրանով նախատեսվող գործողությունները և ռեսուրսները ազատվում են ցանկացած հարկերից, որոնք սահմանված են Դրամաշնորհառուի երկրի տարածքում գործող օրենսդրությամբ:

(բ) Եթե սույն դրույթով այլ բան չի նախատեսվում, «ա» ենթաբաժնում նշված ընդհանուր հարկազատումը (ա) կիրառվում է հետևյալի նկատմամբ, սակայն չի սահմանափակվում դրանով՝ (1) սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄՋԳ ֆինանսավորմամբ իրականացվող ցանկացած գործունեություն, պայմանագիր, դրամաշնորհ կամ կիրարկող այլ համաձայնագիր. (2) վերը նշված (1) ենթակետի համաձայն ցանկացած գործարք կամ մատակարարում, սարքավորումներ, նյութեր, գույք կամ այլ ապրանքներ (այսուհետ հավաքականորեն՝ ապրանք). (3) սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄՋԳ ֆինանսավորմամբ գործունեություն իրականացնող ցանկացած կապալառու, դրամաշնորհառու կամ այլ կազմակերպություն. (4) այդ կազմակերպությունների ցանկացած աշխատող. և (5) սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄՋԳ ֆինանսավորմամբ գործունեություն իրականացնող ցանկացած անհատ կապալառու կամ դրամաշնորհառու:

(գ) Եթե սույն դրույթով այլ բան չի նախատեսվում, «ա» ենթաբաժնում նշված ընդհանուր հարկազատումը (ա) տարածվում է հետևյալ հարկերի վրա, սակայն չի սահմանափակվում դրանցով.

(1) Հարկազատում 1. Մաքսատուրքեր, սակագներ, ներկրման հարկեր կամ այլ վճարներ, որոնք գանձվում են քաղաքացի չհանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների անձնական օգտագործման համար նախատեսված գույքի կամ անձնական իրերի (ներառյալ անձնական օգտագործման ավտոմեքենաների) ներկրման, օգտագործման և վերաարտահանման հետ:

(2) Հարկազատում 2. Եկամտահարկ, շահութահարկ կամ գույքահարկ, որը տարածվում է բոլոր (i) ցանկացած տեսակի ոչ տեղական կազմակերպությունների. (ii) տեղական կամ ոչ տեղական կազմակերպությունների՝ քաղաքացի չհանդիսացող աշխատողների. (iii) քաղաքացի չհանդիսացող անհատ կապալառուների և դրամաշնորհառուների վրա: 2–րդ հարկազատումը ներառում է բոլոր տեսակի եկամտահարկերը և սոցիալական ապահովության բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև նման ոչ տեղական կազմակերպությունների կամ քաղաքացի չհանդիսացող անձանց պատկանող անձնական կամ անշարժ գույքի նկատմամբ կիրառվող բոլոր տեսակի հարկերը: «Ոչ տեղական (քաղաքացի չհանդիսացող)» տերմինը վերաբերում է Դրամաշնորհառուի օրենսդրության համաձայն հիմնադրված կազմակերպություններին և Դրամաշնորհառուի քաղաքացիներին, բացի Միացյալ Նահանգներում մշտական ռեզիդենտ օտարերկրացիներից:

(3) Հարկազատում 3. Սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄՋԳ ֆինանսավորմամբ՝ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման վերջին գործարքի նկատմամբ

կիրառվող հարկեր, այդ թվում՝ շրջանառության հարկերը, ավելացված արժեքի հարկերը (ԱԱՀ), անշարժ կամ անձնական գույքի ձեռքբերման կամ վարձակալության հարկերը: «Վերջին գործարք» տերմինը վերաբերում է այն վերջին գործարքին, որով ապրանքներ և ծառայություններ են ձեռք բերվել սույն Համաձայնագրով ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ գործունեության նպատակով օգտագործման համար:

(դ) Եթե հարկազատման դրույթների խախտմամբ գանձվել և վճարվել է հարկ, ապա ԱՄՆ ՄԶԳ–ն կարող է՝ իր հայեցողությամբ, (1) Դրամաշնորհառուից պահանջել փոխհատուցում վճարել ԱՄՆ ՄԶԳ–ին կամ ԱՄՆ ՄԶԳ–ի ցուցումով՝ այլ անձանց տվյալ հարկի գումարի չափով՝ Համաձայնագրով հատկացված գումարներից բացի այլ միջոցներից, կամ (2) այդ հարկի գումարը հաշվանցել սույն Համաձայնագրով կամ Կողմերի միջև այլ պայմանագրերով հատկացվող գումարներից:

(ե) Հարկազատման կիրառության վերաբերյալ անհամաձայնությունների դեպքում, Կողմերը համաձայնում են անհապաղ հանդիպել և լուծել նման խնդիրները՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից հատկացվող օգնությունն ազատվում է ուղղակի հարկումից, և ԱՄՆ ՄԶԳ կողմից տրամադրվող ամբողջ օգնությունն ուղղակիորեն նպաստելու է Դրամաշնորհառուի երկրի տնտեսական զարգացմանը:

Բաժին Բ.5. Հաշվետվություններ և տեղեկություններ, Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքեր և գրանցամատյաններ, աուդիտներ ու տեսչական ստուգումներ

(ա) Հաշվետվություններ և տեղեկություններ. Դրամաշնորհառուն պետք է ԱՄՆ ՄԶԳ-ին տրամադրի հաշվապահական գրանցամատյաններ ու Համաձայնագրին առնչվող այնպիսի այլ տեղեկություններ ու հաշվետվություններ, որոնք ողջամտության սահմաններում կարող են պահանջվել ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից:

(բ) Դրամաշնորհառուի՝ Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքերը և գրանցամատյանները. Դրամաշնորհառուն պետք է վարի հաշվապահական հաշվառման գրքեր, գրանցամատյաններ, փաստաթղթեր և Համաձայնագրին առնչվող այլ հաշվառման փաստաթղթեր, որոնք բավարար են առանց բացառության արտացոլելու համար Համաձայնագրի շրջանակներում Դրամաշնորհառուի կատարած բոլոր ուղղակի ծախսերը, Համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների ստացումն ու օգտագործումը Դրամաշնորհառուի կողմից, ծախսերի համաֆինանսավորման համաձայնեցված պահանջները, Դրամաշնորհառուի ձեռք բերած ապրանքների ու ծառայությունների հնարավոր մատակարարների առաջարկների

բովանդակությունն ու ծավալները, Դրամաշնորհառուի կողմից պայմանագրերի շնորհման ու պատվերների հիմքերը, ինչպես նաև Համաձայնագիրի իրականացման ուղղությամբ արձանագրված ընդհանուր առաջընթացը («Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքեր և գրանցամատյանները»): Դրամաշնորհառուն Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքերը և գրանցամատյանները վարում է Միացյալ Նահանգներում առավելապես գործող հաշվապահական հաշվառման ընդունված սկզբունքների համաձայն, կամ՝ Դրամաշնորհառուի ընտրությամբ ու ԱՄՆ ՄԶԳ–ի հաստատմամբ, հաշվապահական հաշվառման այլ սկզբունքների համաձայն, որոնցից են այն սկզբունքները, որոնք՝ (1) սահմանված են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից (Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի փոխկապակցված կազմակերպություն), կամ (2) առավելապես գործում են Դրամաշնորհառուի երկրում: Համաձայնագրի հաշվապահական հաշվառման գրքերը և գրանցամատյանները պետք է ԱՄՆ ՄԶԳ վերջին հատկացումից հետո պահվեն առնվազն երեք տարի կամ ավելի երկար ժամանակահատվածում, եթե դա պահանջվում է որևէ հայցի, պահանջների կամ աուդիտի արդյունքում առաջացած խնդիրների կարգավորման համար: Անորոշությունից ու կասկածներից խուսափելու համար՝ սույն Բ.5(բ) մասը կիրառվում է բացառապես Դրամաշնորհառուի կողմից ուղղակիորեն ծախսված դրամաշնորհի ֆինանսական միջոցների նկատմամբ:

(գ) Դրամաշնորհառուի աուդիտը. Եթե ֆինանսական տարվա ընթացքում Դրամաշնորհառուի կողմից սույն Համաձայնագրով ուղղակիորեն ծախսած ԱՄՆ ՄԶԳ–ի դրամական միջոցները կազմում են 300,000 ԱՄՆ դոլար կամ ավելի, ապա Դրամաշնորհառուն պետք է իրականացնի ծախսերի ֆինանսական աուդիտ ստորև ներկայացվող պայմանների համաձայն, եթե Կողմերի միջև այլ բանի վերաբերյալ գրավոր համաձայնություն չկա.

(1) ԱՄՆ ՄԶԳ–ի հաստատմամբ Դրամաշնորհառուն կարող է օգտվել իր բարձրագույն վերստուգիչ հաստատության ծառայություններից կամ ընտրել անկախ աուդիտոր՝ ԱՄՆ ՄԶԳ Գլխավոր վերստուգիչի կողմից սահմանված՝ «Օտարերկրյա շահառուների կողմից պայմանագրային կարգով պատվիրված ֆինանսական աուդիտի ուղեցույցի» (այսուհետ՝ Ուղեցույց) համաձայն, և աուդիտներն անցկացվում են Ուղեցույցի համաձայն, և

(2) Աուդիտի միջոցով պետք է որոշվի, թե արդյոք սույն Համաձայնագրով տրամադրված ֆինանսական միջոցների ստացումն ու դրանցից կատարված ծախսերը ներկայացված են վերոհիշյալ (բ) ենթակետում նշված՝ համաձայնեցված հաշվապահական հաշվառման սկզբունքների հիման վրա, և արդյոք Դրամաշնորհառուն ապահովել է Համաձայնագրի պայմանների հետ համապատասխանությունը: Յուրաքանչյուր աուդիտ պետք է ավարտվի

Դրամաշնորհառուի՝ աուդիտի ենթարկվող տարվա փակումից հետո ոչ ավել քան ինն ամսվա ընթացքում:

(դ) Ենթաշահառուների աուդիտներ. Դրամաշնորհառուն, բացառությամբ այն դեպքերի երբ Կողմերի միջև առկա է գրավոր համաձայնություն այլ բանի վերաբերյալ, պետք է ԱՄՆ ՄԶԳ-ին վերջինիս համար ընդունելի ձևով և բովանդակությամբ ներկայացնի ծախսերի աուդիտի պլան ստորև սահմանված «նախատեսված» ենթաշահառուների համար, որոնք ֆինանսական միջոցներ են ստանում սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար Դրամաշնորհառուի հետ ուղղակի պայմանագրի կամ համաձայնագրի հիման վրա:

(1) «Նախատեսված» ենթաշահառու է համարվում այն ենթաշահառուն, որը ֆինանսական տարում 300,000 ԱՄՆ դոլարի կամ ավելի գումարի չափով ծախսումներ է իրականացնում «ԱՄՆ ՄԶԳ շնորհված պայմանագրերի» շրջանակներում (այսինքն՝ ԱՄՆ ՄԶԳ ռազմավարական նպատակով և օտարերկրյա կառավարությունների հետ ու այլ դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսվող ենթաշահառուներ):

(2) Պլանում պետք է ներկայացվի այն մեթոդաբանությունը, որը Դրամաշնորհառուի կողմից պետք է օգտագործվի նախատեսված ենթաշահառուների մասով աուդիտների անցկացման իր պարտականությունների կատարման համար: Դրամաշնորհառուն կարող է աուդիտների անցկացման նման պարտականությունները կատարել ենթաշահառուների անկախ աուդիտի միջոցով, ենթաշահառուների հաշիվների ստուգումների ընդգրկման նպատակով Դրամաշնորհառուի՝ անկախ ֆինանսական աուդիտի իրավասությունների շրջանակն ընդլայնելու միջոցով, կամ այդ գործելակերպերի համադրման միջոցով:

(3) Պլանում պետք է հստակեցվեն նախատեսված ենթաշահառուների համար հասանելի ֆինանսական միջոցները, որոց նկատմամբ կիրառվում են Դրամաշնորհառուի՝ աուդիտի հետ կապված պարտականությունները բավարարող այլ նորմերով անցկացվող աուդիտներ: (ԱՄՆ-ում հիմնադրված՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունից պահանջվում է իր աուդիտը կազմակերպի ինքնուրույն: ԱՄՆ-ում հիմնադրված շահույթ հետապնդող կազմակերպությունը, որն ուղղակի պայմանագիր ունի ԱՄՆ ՄԶԳ-ի հետ, աուդիտի է ենթարկվում ԱՄՆ կառավարության իրավասու մարմնի կողմից: ԱՄՆ-ից դուրս հիմնադրված մասնավոր կամավորական կազմակերպությունը, որն ուղղակի դրամաշնորհ է ստանում ԱՄՆ ՄԶԳ-ից, պետք է իր աուդիտը կազմակերպի ինքնուրույն: Հյուրընկալող երկրի կապալառուն պետք է աուդիտի ենթարկվի Դրամաշնորհառուի՝ աուդիտային գործունեություն իրականացնող գերատեսչության կողմից):

(4) Դրամաշնորհառուն պետք է ապահովի, որ Դրամաշնորհառուի հետ ուղղակի պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա նախատեսված ենթաշահառուները պատշաճ կերպով և ժամանակին ուղղիչ գործողություններ ձեռնարկեն՝ պարզեն ենթաշահառուի աուդիտի արդյունքում սեփական հաշվառումներում ճշգրտման անհրաժեշտությունը, և յուրաքանչյուր ենթաշահառուից պահանջեն, որ անհրաժեշտության դեպքում աուդիտ իրականացնողների համար ապահովվի իրենց գրանցամատյանների ու ֆինանսական հաշվետվությունների հասանելիությունը:

(ե) Աուդիտային եզրակացություններ. Դրամաշնորհառուն պետք է ԱՄՆ ՄԶԳ–ին տրամադրի կամ կարգադրի՝ որ տրամադրվի, սույն բաժնին համապատասխան կազմակերպված յուրաքանչյուր աուդիտի եզրակացությունը աուդիտի ավարտից հետո 30 օրվա ընթացքում և աուդիտի ենթարկվող ժամանակահատվածից ոչ ուշ, քան ինն ամիս անց:

(զ) Այլ նախատեսված ենթաշահառուներ. «Նախատեսված» ենթաշահառուների համար, որոնք Համաձայնագրով ֆինանսական միջոցներ են ստանում ԱՄՆ ՄԶԳ-ի հետ ուղղակի պայմանագրի կամ համաձայնագրի հիման վրա, ԱՄՆ ՄԶԳ-ն այդ պայմանագրերում ու համաձայնագրերում ներառում է համապատասխան աուդիտային պահանջներ և՝ Դրամաշնորհառուի անունից, իրականացնում այդ պահանջներին համապատասխան ներկայացված աուդիտի եզրակացությունների հետ կապված հետագա անհրաժեշտ գործողությունները:

(է) Աուդիտի ծախսեր. ԱՄՆ ՄԶԳ–ի գրավոր հաստատման դեպքում սույն բաժնի պահանջների համաձայն կատարված աուդիտի ծախսերը կարող են կատարվել Համաձայնագրով նախատեսված միջոցներից:

(ը) ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից աուդիտը. ԱՄՆ ՄԶԳ-ն իրավունք է վերապահում Դրամաշնորհառուի անունից իրականացնելու սույն Համաձայնագրով պահանջվող աուդիտները՝ օգտագործելով Համաձայնագրով նախատեսվող միջոցները կամ այդ նպատակի համար ԱՄՆ ՄԶԳ-ի համար առկա այլ ռեսուրսներ, անցկացնելու ֆինանսական քննություն կամ այլ կերպ ապահովելու ԱՄՆ ՄԶԳ միջոցներից օգտվող կազմակերպությունների հաշվետվողականությունը՝ անկախ աուդիտի անցկացման պահանջից :

(թ) Աուդիտի կամ ստուգման հնարավորություն. Դրամաշնորհառուն ԱՄՆ ՄԶԳ–ի լիազորված ներկայացուցիչներին պետք է ապահովի Համաձայնագրով ֆինանսավորվող գործողությունների, ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից ֆինանսավորվող ապրանքների ու ծառայությունների օգտագործման, Համաձայնագրին առնչվող հաշվապահական գրքերի,

գրանցամատյանների և այլ փաստաթղթերի՝ ողջամտության սահմաններում ցանկացած պահի աուդիտ և ստուգում իրականացնելու հնարավորությամբ:

(ժ) Ենթաշահառուի հաշվապահական գրքեր և գրանցամատյաններ. Դրամաշնորհառուն սույն դրույթի (ա), (բ), (դ), (ե), (է), (ը) և (թ) պարբերությունները պետք է ներառի ոչ ԱՄՆ կազմակերպությունների հետ բոլոր ենթահամաձայնագրերում, որոնք բավարարում են (գ) պարբերությունում սահմանված 300,000 ԱՄՆ դոլարի սահմանը: Ոչ ԱՄՆ կազմակերպությունների հետ ենթահամաձայնագրերը, որոնք չեն բավարարում 300,000 ԱՄՆ դոլարի շեմը պետք է առնվազն պարունակեն սույն դրույթի (ը) և (ժ) պարբերությունները: ԱՄՆ կազմակերպությունների հետ ենթահամաձայնագրերում պետք է նշվի, որ ԱՄՆ կազմակերպությունը ենթակա է աուդիտի OMB Circular A-133 փաստաթղթի պահանջներին համապատասխան:

Բաժին Բ.6. Տեղեկատվության ամբողջականություն

Դրամաշնորհառուն հաստատում է, որ

(ա) այն փաստերն ու հանգամանքները, որոնց մասին տեղեկացրել է ԱՄՆ ՄԶԳ-ին կամ ապահովել դրանց վերաբերյալ տեղեկացումը ԱՄՆ ՄԶԳ-ին վերջինիս հետ սույն Համաձայնագրի շուրջ համաձայության գալու ընթացքում ճշգրիտ են ու ամբողջական և ներառում են բոլոր այն փաստերն ու հանգամանքները, որ կարող են էական ազդեցություն ունենալ Համաձայնագրի և սույն Համաձայնագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա.

(բ) ժամանակին կտեղեկացնի ԱՄՆ ՄԶԳ-ին հետագա փաստերի ու հանգամանքների մասին, որ կարող են կամ ողջամտորեն կարելի է ենթադրել կարող են էական ազդեցություն ունենալ Համաձայնագրի և սույն Համաձայնագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա:

Բաժին Բ.7. Այլ վճարումներ

Դրամաշնորհառուն հավաստիացնում է, որ Դրամաշնորհառուի որևէ պաշտոնյայի կողմից Համաձայնագրով ֆինանսավորվող ապրանքների ու ծառայությունների գնումների հետ կապված որևէ վճարում չի ստացվել և չի ստացվի, բացառությամբ Դրամաշնորհառուի երկրում օրենսդրորեն սահմանված տուրքերի, հարկերի կամ համանման այլ վճարումներից:

Բաժին Բ.8. Տեղեկատվություն և նշագրում

Դրամաշնորհառուն պետք է ապահովի Համաձայնագրի՝ որպես Միացյալ Նահանգների կողմից օժանդակվող ծրագրի պատշաճ հրապարակայնությունը, ապահովի

Համաձայնագրով նախատեսվող գործունեության իրականացման վայրերի նշումը և ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ ձեռք բերված ապրանքների նշագրումը իրականացման մասին նամակներում ներկայացված կարգով:

Հոդված Գ. Գնումների վերաբերյալ դրույթներ

Բաժին Գ.1. Աղբյուր և ծագում

Գ.1. Աղբյուր և ծագում

(ա) Բացառությամբ սույնով սահմանված դեպքերի կամ ԱՄՆ ՄԶԳ ենթահամաձայնագրերով սահմանված դեպքերի, Դրամաշնորհի միջոցները կուղղվեն այն ապրանքների ու ծառայությունների ծախսերի ֆինանսավորմանը, որոնց աղբյուրն ու ծագումը, ինչպես նաև մատակարարներն այն երկրներից են, որոնք դասվում են այդ ապրանքների կամ ծառայությունների համար պատվերների ձևակերպման կամ պայմանագրերի կնքման պահին գործող 937 կամ 110 աշխարհագրական կոդին (Geographic Code 937 or 110) (ԱՄՆ, Հայաստան և ԱՊՀ): Սույն պահանջի բացառությունները ներառում են տեղական գնումների գործարքները, որոնք իրականացվում են ԱՄՆ ՄԶԳ քաղաքականության այն գնումների ընթացակարգերի համաձայն՝ աղբյուրի, ծագման ու պատկանելության վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ-ից պահանջի շրջանցման վերաբերյալ գրավոր թույլտվությունը ստանալուց հետո:

Բացի դրանից.

(1) Օվկիանոսային փոխադրումների ծախսերը Համաձայնագրով կֆինանսավորվեն միայն 935 կոդի երկրների դրոշներով նավերի համար. Նաև տես՝ Գ.6 բաժինը ԱՄՆ դրոշի ներքո նավարկող նավերի վերաբերյալ.

(2) Դրամաշնորհառուի երկիրը համապատասխանության պայմանները բավարարող երկիր է ծովային ապահովագրության արտարժութային ծախսերի համար, եթե այլ կերպ ընդունելի է նաև Գ.7(ա) բաժնի համաձայն:

(3) Համաձայնագրով ֆինանսավորվող ցանկացած ավտոտրանսպորտային միջոց պետք է լինի ԱՄՆ արտադրության, բացառությամբ ԱՄՆ ՄԶԳ-ի հետ գրավոր համաձայնեցված այլ դեպքերի:

(բ) Տեղական արժույթով ծախսեր. Տեղական արժույթով ծախսերի համար հատկացումները պետք է օգտագործվեն բացառապես Համաձայնագրի համար պահանջվող ապրանքների և ծառայությունների ֆինանսավորման համար, որոնք համապատասխանում են ԱՄՆ ՄԶԳ–ի տեղական գնումների կարգին, որը տրամադրվում է իրականացման մասին նամակով:

(գ) Օվկիանոսային ու օդային փոխադրումների դեպքում աղբյուրը և ծագումը դիտարկվում են որպես փոխադրման պահին նավի կամ ինքնաթիռի գրանցման երկիրը:

(դ) Արգելված կամ համապատասխանության պայմաններին չհամապատասխանող ապրանքների ու ծառայությունների մասին դրույթները կարող են տրամադրվել իրականացման մասին նամակով:

(ե) Սույն Համաձայնագրով ֆինանսավորվող անձանց կամ գույքի փոխադրումը կարող է իրականացվել ԱՄՆ հավաստագրում ունեցող փոխադրողների միջոցով, այնքանով, որքանով այդ փոխադրողների ծառայությունները հասանելի են *«Fly America»* ակտով: Այս պահանջը կարող է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից մանրամասն ներկայացվել իրականացման մասին նամակով:

Բաժին Գ.2. Համապատասխանելիության ամսաթիվ

Սույն Համաձայնագրով որևէ ապրանք և ծառայություն չի կարող ֆինանսավորվել, եթե դրանց գնման պատվերը տրվել է կամ պայմանագիրը կնքվել է նախքան սույն Համաձայնագրի ամսաթիվը, բացառությամբ Կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ դեպքերի:

Բաժին Գ.3. Պլաններ, մասնագրեր, պայմանագրեր

Բացառությամբ Կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ դեպքերի, ստորև ներկայացվող հարցերի շուրջ փոխադարձ համաձայնություն ապահովելու համար՝

(ա) Դրամաշնորհառուն կազմելուց և պատրաստելուց հետո ԱՄՆ ՄԶԳ-ին է ներկայացնում.

(1) ցանկացած պլան, մասնագիր, գնումների կամ շինարարական աշխատանքների ժամանակացույց, պայմանագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք ձևակերպվում են Դրամաշնորհառուի ու երրորդ անձանց միջև Համաձայնագրի ներքո ֆինանսավորման ենթակա ապրանքների ու ծառայությունների հետ կապված, ներառյալ կապալառուների նախառակավորմանը, ընտրությանը, մրցույթների հրավերներին ու առաջարկներին առնչվող փաստաթղթերը: Այս փաստաթղթերում էական փոփոխությունների դեպքում, դրանք վերստին պետք է պատրաստ լինելուն պես տրամադրվեն ԱՄՆ ՄԶԳ-ին. և

(2) փաստաթղթեր, որոնք վերաբերում են ապրանքի և ծառայության, որը չի ֆինանսավորվում Համաձայնագրով, սակայն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից համարվում է Համաձայնագրի համար նշանակալի կարևորության ապրանք կամ ծառայություն: Համաձայնագրի այն առանձնահատկությունները, որոնք վերաբերում են սույն (ա)(2)

ենթաբաժնում ներկայացված հարցերին, կներկայացվեն իրականացման մասին նամակներով:

(բ) Համաձայնագրով ֆինանսավորվող ապրանքների ու ծառայությունների հետ կապված կապալառուների նախառրակավորմանը, մրցույթների հրավերներին ու առաջարկներին առնչվող փաստաթղթերը նախքան տրամադրումը ենթակա են նախապես գրավոր հաստատման ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից և դրանց պայմանները պետք է ներառեն ԱՄՆ ստանդարտներն ու գնահատման չափորոշիչները.

(գ) Համաձայնագրի ներքո ճարտարագիտական կամ այլ մասնագիտական ծառայությունների, շինարարական աշխատանքների և համանման այլ ծառայությունների համար ֆինանսավորվող կապալառուները ու պայմանագրերը ենթակա են ԱՄՆ ՄԶԳ–ի գրավոր հաստատմանը նախքան պայմանագրի ստորագրումը: Նման պայմանագրերի էական փոփոխությունները նույնպես պետք է նախապես գրավոր հաստատվեն ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից նախքան ստորագրումը. և

(դ) Համաձայնագրի իրականացման նպատակով Դրամաշնորհառուի կողմից ներգրավված, սակայն Համաձայնագրով չֆինանսավորվող խորհրդատվական ընկերությունները, նրանց ծառայությունների ծավալը և նրանց այն աշխատողների իրավասությունների շրջանակը, որոնց հանձնարարված են Համաձայնագրով ֆինանսավորվող՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից նշված աշխատանքներ, ինչպես նաև Համաձայնագրի իրականացման նպատակով Դրամաշնորհառուի կողմից ներգրավված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուները պետք է ընդունելի լինեն ԱՄՆ ՄԶԳ–ի համար:

Բաժին Գ.4. Ողջամիտ գին

Համաձայնագրով ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող որևէ ապրանքի կամ ծառայության համար չի կարող վճարվել դրա ողջամիտ գնից ավելի գումար: Նման ապրանքները կամ ծառայությունները պետք է ձեռք բերվեն արդարացի, հավասար և մրցակցային հիմունքներով:

Բաժին Գ.5. Ծանուցում հնարավոր մատակարարներին

ԱՄՆ ընկերություններին սույն Համաձայնագրով ապրանքներ ու ծառայություններ տրամադրելու գործընթացում մասնակցության հնարավորություն ընձեռելու համար Դրամաշնորհառուն ԱՄՆ ՄԶԳ-ին պետք է նրանց վերաբերյալ տրամադրի համապատասխան տեղեկություններ, և այդ տեղեկությունների տրամադրումն

իրականացնի այն ժամանակ, երբ դա կարող է պահանջվել ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից իրականացման նամակներով:

Բաժին Գ.6. Փոխադրում

(ա) Ի լրումն Գ.1(ա) բաժնում նշված պայմանների, օվկիանոսային կամ օդային փոխադրման կամ առաքման հարակից ծախսերը չեն կարող ֆինանսավորվել Համաձայնագրով, եթե այդ ծախսերն արվել են օվկիանոսային կամ օդային այն տրանսպորտով իրականացված փոխադրումների համար, որոնց վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ–ի նախնական հաստատում չի ստացվել:

(բ) եթե ԱՄՆ ՄԶԳ–ն չի որոշում, որ ԱՄՆ դրոշի ներքո նավարկող առևտրային մասնավոր նավերը հասանելի չեն այդ նավերի համար արդարացի ու ողջամիտ գներով, կամ եթե չկա այլ բանի վերաբերյալ գրավոր համաձայնություն, ապա՝

(1) ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող բոլոր ապրանքների համախառն քաշի առնվազն հիսուն տոկոսը (50%) (հաշվարկված չոր չփաթեթավորված նավային փոխադրումների, չոր լայներային փոխադրումների ու ցիստեռնների համար առանձին), որոնք կարող են փոխադրվել օվկիանոսային նավերով, պետք է փոխադրվի ԱՄՆ դրոշի ներքո նավարկող մասնավոր առևտրային նավերով. և

(2) ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված ու Դրամաշնորհառուի երկիր փոխադրված չոր լայներներով բոլոր բեռնափոխադրումներից ստացված համախառն եկամտի առնվազն հիսուն տոկոսը (50%) պետք է վճարվի կամ հատկացվի հօգուտ ԱՄՆ դրոշի ներքո նավարկող մասնավոր առևտրային նավերի: Սույն ենթաբաժնի (1) և (2) պահանջների հետ համապատասխանությունը պետք է ապահովվի թե՛ ԱՄՆ նավահանգիստներից փոխադրվող բեռների, թե՛ ԱՄՆ–ից դուրս գտնվող նավահանգիստներից փոխադրվող բեռների նկատմամբ՝ առանձին հաշվարկած:

Բաժին Գ.7. Ապահովագրություն

(ա) Դրամաշնորհառուի երկիր փոխադրվող ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ապրանքների ծովային ապահովագրությունը կարող է ֆինանսավորել որպես արտարժութային ծախս սույն Համաձայնագրի ներքո, եթե

(1) այդ ապահովագրությունն արվում է առավել նպաստավոր մրցակցային դրույքաչափով,

(2) այդ ապահովագրությունն արվում է այնպիսի երկրում, որը Գ.1(ա) բաժնի համաձայն արտոնված երկիր է, և

(3) դրանով նախատեսված պահանջները ենթակա են վճարման ԱՄՆ դոլարով կամ որևէ ազատ փոխարկելի արժույթով, եթե ԱՄՆ ՄԶԳ-ի հետ այլ բանի վերաբերյալ գրավոր համաձայնություն ձեռք չի բերվել:

Եթե Դրամաշնորհառուն (կամ Դրամաշնորհառուի կառավարությունը) օրենքով, որոշմամբ, կանոնակարգով կամ գործելակերպով ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ գնված ապրանքների հարցով խտրականություն է ցուցաբերում ԱՄՆ ցանկացած նահանգում գործելու իրավասություն ունեցող ծովային ապահովագրություն իրականացնող ընկերության հանդեպ, ապա ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Դրամաշնորհառուի երկիր փոխադրվող ապրանքները պետք է ապահովագրվեն ծովային ռիսկերից ԱՄՆ-ում այնպիսի ընկերության կամ ընկերությունների կողմից, որոնք իրավասու են ծովային ապահովագրության գործունեություն իրականացնել ԱՄՆ-ում:

(բ) Բացառությամբ ԱՄՆ ՄԶԳ–ի հետ գրավոր համաձայնեցված դեպքերի, Դրամաշնորհառուն պետք է ապահովագրի կամ կարգադրի ապահովագրել Համաձայնագրով ֆինանսավորվող՝ Համաձայնագրի իրականացման նպատակով ներմուծվող ապրանքներն այնպիսի ռիսկերից, որոնք կարող են տեղ գնել տարանցման ընթացքում՝ մինչև Համաձայնագրով նախատեսված օգտագործումը. նման ապահովագրությունը պետք է իրականացվի գործարար սովորույթների լավագույն պահանջներին ու պայմաններին համահունչ և պետք է լինի ապրանքերի ամբողջ արժեքի համար: Դրամաշնորհառուի կողմից ստացած ցանկացած ապահովագրական փոխհատուցում պետք է օգտագործվի ապահովագրված ապրանքները՝ պատճառված նյութական վնասի կամ կորուստի դեպքում, փոխարինելու կամ նորոգելու համար կամ պետք է օգտագործվի Դրամաշնորհառուին այդպիսի ապրանքների փոխարինման կամ նորոգման համար փոխհատուցելու նպատակով: Ցանկացած փոխարինման դեպքում աղբյուրը և ծագումը պետք է լինեն այնպիսի երկրում, որը ներառված է ԱՄՆ ՄԶԳ 935 աշխարհագրական կոդի ներքո, որն ուժի մեջ կլինի փոխարինման պահին և՝ բացառությամբ Կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ դեպքերի, գործում են սույն Համաձայնագրի դրույթները:

Բաժին Գ.8. ԱՄՆ կառավարությանը պատկանող հավելյալ գույք

Դրամաշնորհառուն համաձայնում է, որ գործնականում նպատակահարմար լինելու դեպքում, Համաձայնագրով նոր ապրանքների ֆինանսավորման փոխարեն պետք է օգտագործվի ԱՄՆ կառավարությանը պատկանող հավելյալ անձնական գույքը: Համաձայնագրի ֆինանսական միջոցների հաշվին կարող են ֆինանսավորվել այդպիսի գույքի ձեռք բերման ծախսերը:

Հոդված Դ. Հատկացումներ

Բաժին Դ.1. Հատկացման ձևեր

Կողմերի միջև գրավոր համաձայնությամբ հատկացումները կարող են կատարվել նաև այլ ձևերով:

Բաժին Դ.2. Փոխարժեք

Եթե Համաձայնագրով տրամադրվող դրամական միջոցները ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից Համագործակցող երկիր կամ պետական և մասնավոր ընկերություն են բերվում ԱՄՆ ՄԶԳ–ի՝ սույնով սահմանված պարտավորությունների կատարման նպատակով, ապա Դրամաշնորհառուն պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որ դրամական միջոցները փոխարկվեն տեղական արժույթի հնարավորինս բարձր փոխարժեքով, որը փոխարկման պահին Դրամաշնորհառուի երկրում որևէ անձի կամ որևէ նպատակի համար անօրինական չէ:

Հոդված Ե. Դադարեցում. իրավական միջոցներ

Բաժին Ե.1. Կասեցում և դադարեցում

(ա) Կողմերից յուրաքանչյուրը կարող է ամբողջությամբ դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ մյուս կողմին երեսուն (30) օր առաջ այդ մասին գրավոր ծանուցում ներկայացնելով: ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է Համաձայնագիրը դադարեցնել նաև մասնակիորեն՝ Դրամաշնորհառուին երեսուն (30) օր առաջ այդ մասին գրավոր ծանուցում ներկայացնելով, կամ կասեցնել սույն Համաձայնագիրը ամբողջությամբ կամ մասամբ այդ մասին գրավոր ծանուցելով: Նման մասնակի կասեցումը չի ազդում Համաձայնագրով նախատեսված այլ գործողությունների վրա, բացի կասեցված գործողություններից: Բացի դրանից, ԱՄՆ ՄԶԳ–ն կարող է սույն Համաձայնագիրը ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել՝ գրավոր ծանուցում ուղարկելով Դրամաշնորհառուին, եթե (i) Դրամաշնորհառուն չի կատարել սույն Համաձայնագրի որևէ դրույթ, (ii) ի հայտ է եկել որևէ հանգամանք, որը ԱՄՆ ՄԶԳ-ին հիմք է տալիս որոշելու, որ անհավանական է դարձել Համաձայնագրի նպատակի ու ծրագրի բաղադրիչների կամ օժանդակության ծրագրի իրականացումը կամ Դրամաշնորհառուի կողմից Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը, կամ (iii) սույնով նախատեսվող որևէ հատկացում կամ դրամական միջոցների օգտագործում կարող է հակասել տվյալ պահին գործող կամ հետագայում գործողության մեջ դրվող այն օրենսդրությանը, որով ղեկավարվում է ԱՄՆ ՄԶԳ–ն:

(բ) Բացառությամբ այնպիսի վճարումների, որոնք Կողմերը պարտավորվել են վճարել որևէ երրորդ կողմի առջև նախքան կասեցումը կամ դադարեցումը ստանձնած անչեղարկելի պարտավորությունների համաձայն, սույն ամբողջ Համաձայնագրի կամ դրա մի մասի կասեցմամբ կամ դադարեցմամբ կասեցվում (կասեցման ժամանակահատվածի համար), կամ՝ հարկ եղած դեպքում, դադարեցվում է Կողմերի՝ ֆինանսական կամ այլ միջոցներ տրամադրելու ցանկացած պարտավորություն Համաձայնագրի մասով կամ՝ կիրառելիության դեպքում, Համաձայնագրի կասեցված կամ դադարեցված մասով: Սույն Համաձայնագրի չկասեցված կամ չդադարեցված ցանկացած մաս շարունակում է լիակատար գործողության մեջ լինել:

(գ) Բացի դրանից, նման ամբողջական կամ մասնակի կասեցման կամ դադարեցման դեպքում ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է իր հաշվին հրահանգել, որ Համաձայնագրով կամ Համաձայնագրի գործող մասով ֆինանսավորվող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվի ԱՄՆ ՄԶԳ-ին, եթե ապրանքներն առաքման փուլում են:

Բաժին Ե.2.Միջոցների վերադարձ

(ա) Ցանկացած հատկացման դեպքում, որը հիմնավորված չէ ըստ սույն Համաձայնագրին համապատասխան վավերական փաստաթղթերով կամ, որը չի տրամադրվել կամ օգտագործվել ըստ սույն Համաձայնագրի, կամ տրամադրվել է այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք չեն օգտագործվել սույն Համաձայնագրին համապատասխան, ԱՄՆ ՄԶԳ-ն՝ չնայած սույն Համաձայնագրով հասանելի կամ կիրառելի իրավական պաշտպանության այլ միջոցների առկայությանը, կարող է դրամաշնորհառուից պահանջել ԱՄՆ ՄԶԳ-ին հետ վերադարձնել այդ հատկացումների գումարը ԱՄՆ դոլարով՝ դրա պահանջը ստանալուց վաթսուն (60) օրվա ընթացքում:

(բ) Եթե դրամաշնորհառուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների չկատարումը հանգեցնում է սույն Համաձայնագրով ֆինանսավորվող կամ օժանդակվող ապրանքների կամ ծառայությունների անարդյունավետ օգտագործմանը՝ սույն Համաձայնագրով նախատեսված կարգով, ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է պահանջել, որ Դրամաշնորհառուն ԱՄՆ ՄԶԳ-ին հետ վերադարձնի այդ ապրանքների կամ ծառայությունների համար կամ դրանց հետ կապված սույն

Համաձայնագրով հատկացված գումարն ամբողջությամբ կամ դրա մի մասը ԱՄՆ դոլարով՝ դրա պահանջը ստանալուց վաթսուն (60) օրվա ընթացքում:

(գ) Հատկացումը հետ վերադարձնելու վերաբերյալ՝ (ա) կամ (բ) ենթակետերով նախատեսված պահանջի իրավունքը, անկախ սույն Համաձայնագրի այլ դրույթներից, շարունակում է ուժի մեջ մնալ սույն Համաձայնագրով վերջին հատկացումից հետո երեք տարվա ընթացքում:

(դ) (1) (ա) կամ (բ) ենթակետերով նախատեսված ցանկացած հետվճարում կամ (2) ցանկացած հետվճարում ԱՄՆ ՄԶԳ-ին՝ կապալառուի, մատակարարի, բանկի կամ երրորդ կողմի կողմից, կապված սույն Համաձայնագրով ֆինանսավորվող ապրանքների և ծառայությունների հետ, որոնց հետ կապված հետ վերադարձը կապված է ապրանքների կամ ծառայությունների ոչ ողջամիտ գնի կամ սխալ ապրանքագրի, կամ մասնագրին չհամապատասխանող ապրանքների կամ անհամապատասխան ծառայությունների հետ, (Ա) կհատկացվի առաջին հերթին Համաձայնագրի համար, այնքանով, որքանով դա արդարացված կլինի և (Բ) մնացած մասը, եթե այդպիսին լինի, կկիրառվի Դրամաշնորհի գումարը կրճատելու համար:

(ե) ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից Դրամաշնորհառուին սույն Համաձայնագրով հատկացվող գումարներից ստացված ցանկացած տոկոսադրույք կամ այլ եկամուտներ, մինչև Համաձայնագրի նպատակներով այդ գումարների արտոնված օգտագործումը, Դրամաշնորհառուի կողմից կվերադարձվեն ԱՄՆ ՄԶԳ-ին ԱՄՆ դոլարով, եթե ԱՄՆ ՄԶԳ-ի հետ այլ բանի վերաբերյալ չկա գրավոր համաձայնություն:

Բաժին Ե.3. Իրավական միջոցներից հրաժարման բացառում

Սույն Համաձայնագրով ֆինանսավորման հետ կապված Կողմի իրավունքների կամ իրավական միջոցների կիրառման ուշացումը չի մեկնաբանվում որպես հրաժարում նման իրավունքներից կամ միջոցներից:

Բաժին Ե.4. Իրավունքի փոխանցում

Դրամաշնորհառուն, պահանջի դեպքում, համաձայնում է իրավունքները փոխանցել ԱՄՆ ՄԶԳ-ին ցանկացած հայցի դեպքում, որ կարող է կապված լինել կամ ի հայտ գալ Դրամաշնորհառուի նկատմամբ սույն համաձայնագրի ներքո ԱՄՆ ՄԶԳ կողմից մասամբ կամ ամբողջովին ֆինանսավորված ԱՄՆ դոլարով ուղղակի պայմանագրի որևէ կողմի՝ պայմանագրի կատարման կամ կատարման խախտումների հետևանքով:

Հոդված Զ. Այլ դրույթներ

Բաժին Զ.1. Ներդրումների խթանում

(ա) Եթե սույն Համաձայնագրով հստակ սահմանված չէ կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից չկա այլ գրավոր թույլտվություն, ապա սույնով տրամադրվող ֆինանսական միջոցներն ու այլ օգնությունը չեն կարող օգտագործվել այնպիսի գործողությունների համար, որ ուղղված են ներդրումների խթանմանը օտարերկրյա պետությունում:

(բ) Այն դեպքում, երբ Դրամաշնորհառուն ստանում է առաջարկ կամ ցանկանում է օժանդակություն ցուցաբերել վերոհիշյալ ոլորտում կամ պարզաբանում է խնդրում ԱՄՆ ՄԶԳ-ից այն մասին, թե արդյոք այդ գործողությունը չի հակասի վերը սահմանված սահմանափակմանը, Դրամաշնորհառուն պետք է ԱՄՆ ՄԶԳ-ին ծանուցի ու մանրամասն նկարագիր տրամադրի առաջարկվող գործողության վերաբերյալ: Դրամաշնորհառուն չի կարող ընթացք տալ այդ գործողությանը, քանի դեռ ԱՄՆ ՄԶԳ-ից դա կատարելու մասին ծանուցում չի ստացել:

(գ) Դրամաշնորհառուն պետք է ապահովի, որ բոլոր աշխատողները, ենթակապալառուները և ենթաշահառուները, որ մատուցում են ներդրումների խթանմանն առնչվող ծառայություններ, տեղյակ լինեն սույն կետով սահմանվող սահմանափակումներին, և սույն դրույթը պետք է ներառվի կնքվող հետագա ենթապայմանագրերում ու ենթահամաձայնագրերում:

Բաժին Զ.2. Արգելք թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված անձանց աջակցելու վերաբերյալ

(ա) ԱՄՆ ՄԶԳ իրավունք է վերապահում իրեն դադարեցնել սույն Համաձայնագիրը կամ ձեռնարկել համապատասխան միջոցներ, եթե բացահայտվում է, որ Դրամաշնորհառուն կամ Դրամաշնորհառուի առանցքային դերակատարում ունեցող անձանցից մեկը դատապարտվել է թմրամիջոցների հետ կապված հանցագործության համար կամ ներգրավված է եղել թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ, ինչպես սահմանված է Դաշնային կանոնակարգերի ժողովածուի 22-րդ գլխի 140–րդ բաժնում (22 CFR Part 140):

(բ) Դրամաշնորհառուն համաձայնում է չհատկացնել միջոցներ կամ չստորագրել փաստաթղթեր, որոնցով պարտավորվում է միջոցներ հատկացնել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից նշանակված ենթաշահառուին («Նշանակված ենթաշահառու») քանի դեռ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից չի ստացվել ծանուցում այն մասին, որ (1) ԱՄՆ կառավարության կողմից ավարտվել է նշանակված ենթաշահառուի ու նրա առանցքային դերակատարում ունեցող անձանց ուսումնասիրությունը, (2) ձեռք են բերվել համապատասխան բոլոր

հավաստագրումները և (3) նշանակված ենթաշահառուին օժանդակության տրամադրումը հաստատվել է:

Դրամաշնորհառուն պարտավորվում է նշանակված ենթաշահառուի հետ համաձայնագրում ներառել ստորև ներկայացվող դրույթը կամ արտացոլել դրա բովանդակությունը.

«Դրամաշնորհառուն իրավունք է վերապահում դադարեցնել սույն Համաձայնագիրը կամ ձեռնարկել համապատասխան այլ միջոցներ, եթե բացահայտվում է, որ [Նշանակված ենթաշահառուն] կամ [Նշանակված ենթաշահառուի] առանցքային դերակատարում ունեցող անձանցից մեկը դատապարտվել է թմրամիջոցների հետ կապված հանցագործության համար կամ ներգրավված է եղել թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ, ինչպես սահմանված է Դաշնային կանոնակարգերի ժողովածուի 22-րդ գլխի 140–րդ բաժնում (22 CFR Part 140):

Բաժին Զ.3. Աշխատողների իրավունքներ

(ա) Եթե սույն Համաձայնագրով հստակ սահմանված չէ կամ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից չկա այլ գրավոր թույլտվություն, ապա սույնով տրամադրվող ֆինանսական միջոցներն ու այլ օգնությունը չեն կարող օգտագործվել այնպիսի գործողությունների համար, որ առնչվում են արտերկրում աշխատողների իրավունքներին:

(բ) Այն դեպքում, երբ Դրամաշնորհառուն ստանում է առաջարկ կամ ցանկանում է օժանդակություն ցուցաբերել վերոհիշյալ ոլորտում կամ պարզաբանում է խնդրում ԱՄՆ ՄԶԳ-ից այն մասին, թե արդյոք այդ գործողությունը չի հակասի վերը սահմանված սահմանափակմանը, Դրամաշնորհառուն պետք է ԱՄՆ ՄԶԳ-ին ծանուցի ու մանրամասն նկարագիր տրամադրի առաջարկվող գործողության վերաբերյալ: Դրամաշնորհառուն չի կարող ընթացք տալ այդ գործողությանը, քանի դեռ չի ԱՄՆ ՄԶԳ-ից դա կատարելու մասին ծանուցում չի ստացել:

(գ) Դրամաշնորհառուն պետք է ապահովի, որ բոլոր աշխատողները, ենթակապալառուները և ենթաշահառուները, որ մատուցում են զբաղվածությանն առնչվող ծառայություններ, տեղյակ լինեն սույն կետով սահմանվող սահմանափակումներին, և սույն դրույթը պետք է ներառվի կնքվող հետագա ենթապայմանագրերում ու ենթահամաձայնագրերում:

Բաժին Զ.4. Ահաբեկչության ֆինանսավորում

Ենթակապալառուին հիշեցվում է, որ ԱՄՆ կառավարության կարգադրություններով և ԱՄՆ օրենսդրությամբ արգելվում է ահաբեկչության հետ առնչություն ունեցող

անհատների ու կազմակերպությունների, ինչպես նաև ԱՄՆ Գանձապետարանի (Արտերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակ) կողմից սահմանված քաղաքացիների և արգելված անձանց հետ գործարքների մեջ մտնելը, ինչպես նաև նրանց ռեսուրսներ և օժանդակություն տրամադրելը: Սույն Համաձայնագրի համաձայն, Ենթակապալառուն իրավական պատասխանատվություն է կրում այդ կարգադրությունների և օրենսդրության հետ համապատասխանության ապահովման համար: Սույն դրույթը պետք է ներառվի սույն Համաձայնագրի շրջանակներում կնքվող հետագա ենթապայմանագրերում ու ենթահամաձայնագրերում:

Բաժին 2.5. Արգելք միջազգային համաժողովներում օտարերկրյա կառավարությունների պատվիրակությունների ֆինանսավորման վերաբերյալ

Եթե ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից գրավոր համաձայնություն չկա, ապա սույն Համաձայնագրով նախատեսվող ֆինանսական միջոցները, որ տրամադրվում են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ըստ «Արտաքին գործարքների, արտահանման ֆինանսավորման և հարակից ծրագրային հատկացումների մասին» ակտի, սկսած ԱՄՆ կառավարության 1999 ֆինանսական տարվանից չեն կարող օգտագործվել միջազգային հասարակական կազմակերպության կողմից ֆինանսավորվող որևէ միջազգային համաժողովում օտարերկրյա պատվիրակության ուղևորության, օրապահիկի, հյուրանոցային, սննդի, համաժողովի մասնակցության և այլ ծախսերը հոգալու համար: Սույն սահմանափակման մասին հավելյալ մանրամասները կարող են ԱՄՆ ՄԶԳ–ի կողմից ներկայացվել իրականացման մասին նամակներում: